



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

24540


ԱՆ-1911 804

ՎՐԱՍՏԱՆԻ ԱՐՀ. Մ. Խ. ԳԱՅՐԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ԲԱԳՐԱՏ ՄԱՉԱԳԵ

ՎՐԱՍՏԱՆԻ
ԱՐՅՈՒՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
1905 թՎԱԿԱՆԻՆ

19 տրեսու
մայիս 31



Արմ.

Հ 2-5992

ՎՐԱՍՏԱՆԻ ԱՐՀ. Մ. Խ. ԳԵՂՄՈՒՅՆ ԲԱԺԱՆՄՈՒՆ

15 JAN 2010
Ամ 111

331.88

Մ-30

Հ-5992

ԲԱԳՐԱՏ ՄԱԶՄԱՏ

ՎՐԱՍՏԱՆԻ

ԱՐՅԱՆԻ ԹՅՈՒՆՆԵՐԸ

1905 թ ՎԱԿԱՆԻՆ

F.I.B.-ի սելազակ
Լույս 1981 թ.
Հատ. № Ա 418

1184

ԻՆՎ.

№ 20678

19 ԾՐԾՈՒ
ԹԻՖԼԻՍ 31

ԱՌԱԶԱՐԱՆ

..Вся наша партия признала теперь...
что работа в профессиональных союзах надо вести не в духе нейтральности союзов".
1.Б.Н.

Թիֆլիս, տպարան լուսագրուելի հրատարակչության «Կողեկտիվ»
Գլավվառ № 995 Տիքառ 1.500.
Պատվեր № 463.



1478-671

4813 - 91

25 ապրիլ յե անցել այն որից, յերբ նախկին Խուսաստանի կայսրության աշխատավոր մասսաները զենքը ձեռներին ուժեղ ճարճակում գործեցին իրենց ստրկացնող ցարի ուժիմի դիմ։ Համաշխարհային պրոլետարիատի զեկավար Լենինի ասելով սա մի «գեներալնայա ունակեալիցիա» յեր Հոկտեմբերյան հեղափոխության, և մի ուժեղ հարված, վորը տաննյակ ասրիների ընթացքում ճնշված ժողովուրդը պատրաստում էր Ռոմանովների գահի և նրան ամրացնող կալվածաւերերի և հոգևորականության համար։

Ի՞նչպիսի հեղափոխություն եր դա իր եռությամբ։ Սրան կարելի յի տալ հետեւյալ պարզ պատասխանը։ Բուրժուական հեղափոխություն եր դա, վորովինեան դահնից յեղած ցարի փոխարեն նա նպատակ ուներ հիմնել բուրժուա-դիմոկրատական հանրապետություն։

Լենինն այսպիս եր բնորոշում, օրուրժուա-պյուղական եր այս հեղափոխությունը, վորովինեան որ յեկտիլ պատճառները առաջնակարգ տեղ եյին տալի պյուղացիության կյանքի պայմանների հիմնական փո-

փոխման յենթարկելու հարցին: Բուրժուական եր այս
հեղափոխությունը, վորովհետև նրա նպատակն եր Ժոշ
թե բուրժուական իշխանության վերացումը, այլ ցարի
դաշի խորտակումը և կալվածատերերի հողային իրա-
վունքների խախտումը միայն:

Սյսպիսով թե բաշկեները և թե մենշևիկները
ընդունում ենին, վոր հեղափոխությունն առաջին հեր-
թին պետք է իրեն նպատակ դներ ճորտատիրական
մասցրդների վերացումը: Մակայն այս յերկու կու-
ռակցությունների միջև առաջ յեկավ յերկապառակու-
թյուն այն մասին, թե ով պետք է հեղափոխության
զեկավար հանդիսանա, բուրժուազիան, թե պրոլետա-
րիանը:

Սոցիալ-դեմոկրատ կուսակցության մենշևիկյան
հոստնքը այս հեղափոխության մեջ առաջնությունը
տալիս եր բուրժուազիային և պնդում, թե պրոլետա-
րիանը և չքավոր գյուղացիությունը չի կարող դառ-
նալ հեղափոխության առաջ շարժող ուժի: Իսկ բազե-
վիկները պնդում եյին հակառակը և հեղափոխության
առաջ առանող ուժի ու ավանդարդ համարում պրոլե-
տարիատը:

Ահա թե ինչ եր զրում այս մասին լինինը.

«Հեղափոխության առաջ մզող զիլսավոր ույժն ու
հեղեղմոնիան պրոլետարիատն եւ Միտակետությունը բա-
ցարձակ կերպով դուրս եր գալիս կապիտալիստներին
պաշտպանելու, իսկ պրոլետարիատի առաջնակարգ հար-
ցը կաղմում եր միապետության տապալումը Բուր-
ժուազիմոկրատական հեղափոխության մեջ զեկավար
գերը պատկանում և պրոլետարիատին... Այս ճշմար-
տության հերքման վորձը անպայմանորեն կը դատա-

պարտե սոյ, - գեմոկրատներին, վորպես ատանգող-
ների»:

Այսպիսով, այս յերկու հոստնքը բոլորովին այլ
տեսակետ գտավ 1905 թ. հեղափոխության պրոլետա-
րիատի զեկավարության տակտիկայի մեջ:

Ի՞նչպիսի տևակետ ունեցին սրանք արհեստակ-
ցական միությունների զեկավարության հարցում, —
կարելի յե ասել, վոր մենշևիկներն այստեղ ել կանգնած
եյին ոպրացունիստական ճանապարհի վրա:

Յեթե 1905 թ. հեղափոխության ժամանակաշրը-
ջանում զեմ եյին զինված հարձակումներին, արհմիու-
թյունների խնդրում ևս բռնել եյին զիջողականության
և համաձայնողական քաղաքականության ճամփան:

Նրանք ուզում եյին, վոր 1905 թ. մարտի 4-ի
որենքի գծով «համաձայնություն կայացնեն» աշխա-
տանքի և կապիտալի միջև, ու արհմիությունները
կանգնեցնել եյին տրեզունիոնիզմի ճանապարհը վրա:
Իհարկե մասնավորապես նրանք այս կարողացան աջո-
ղեցնել, վորն ապացուցում և այս աշխատությանս մեջ
առաջ բերված ավյաներով:

Վերջում կուգեյի մի քանի խոսք ասել աշխատու-
թյանս մեջ նկատվող վորոց թերությունների մասին,
վորոնք իմ կարծիքով, անշուշտ, կան այստեղ: Վոր-
քան ինձ հայտնի յի, Վրաստանում այսպիսի աշխա-
տություն գրփում և առաջին անգամ, հետևապես, կաս-
կածից գուրս ե, վոր պակասություն կունենա: Յեթե
ի նկատի առնենք այն հանգամանքը, վոր մեզանում
արհմիության շարժման պատմության համար պետք
յեզու նյութերն անուշադրության են մատնված յեղել
վոչ թե առաջներում միայն, այլ հենց հիմա յել վո-
մանց կողմից անուշադրության և մատնված և վոչ ել

դոյություն ունի վորեա պահեստ այդ պատմական նյութերի պահպանման համար, պարզ կը լինի այն դժվարությունը, վոր ծառանում և Վրաստանի արհմիությունների շարժման պատմությունը կազմողի առաջ:

Բացի զրանից, այստեղ վոչինչ չի առված այն ժամանակվա առանձին արհմիությունների մասին, վորովհետև մենք շոշափում ենք միմիայն կազմակերպչական կողմերը և կուսակցական պայքարը արհմիությունների խնդիրներում:

Հուսանք, վոր այս պակասը կը լրացվի ապագայում: Հեղինակ.

Պ. Վ. Այս աշխատությունը տպված և ռանդուցիս մատյանե» 1/23 №-ում: Այժմ լույս և անմնում հավելվածով, փոփոխված ձևով: Հեղինակ.

ՎՐԱՍՏԱՆԻ ԱՐՃԵՍԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐԸ 1905 ԹՎԱԿԱՆԻՆ

Բանվորական արհեստակցական շարժման առաջդալը և նրա հետագա զարգացումը սերտ կերպով կապված և մեզանում կապիտալիզմի ներխուժման հետ: Այս պատճառով ավելորդ չելինի, յեթե անցրդակի կերպով հիշելու լինենք առաջին հեղափոխության նախաշրջանի դրության, վրաստանում բանվոր գասակարգի առաջ գալու և նրա մղած պայքարի մասին այն ձափորդ պայմանների դեմ, վոր ստեղծված եր հարստանալու տեսնչով բռնված ֆինանսա-արտադրական կապիտալի կողմից: Ինչպես հայտնի յե արտադրողականության պատճությունից, շոգեշարժ ույժի գործադրությունը խոշոր չափով առաջ մղեց արտադրությունը՝ կարկի յե ասել, վոր արտադրության գործում սա մի խոշոր հեղափոխություն եր, վորի թափը մեզ ևս հասավ: Տնայնագործական արհեստանոցները շուտով փոխվեցան շոգեշարժ մեքենաների: Անդրկովկասը ծածկվեց յերկաթուղային ցանցերով, Թիֆլիսում հիմնվեցին յերկաթուղային գլխավոր արհեստանոցներ, բացվեց Միրզումի միակալի գործարանը, Աղելիսանովի կոշիկների և թաղիքի գործարանը, զարգացավ կաշվի արտադրությունը: 1879 թ. ակադեմիկոս Արիմը հայտնաբերեց ձիաթուրի մարգանեցը. 1880 թ. հայտնաբերեց Տղիկ-

բուլի քարտծիս հանքը, իսկ աշխատանքն սկսվեց 1847 թվից։ Բաթումի շրջանում հիմնվեցին զանազան տեսակի արտադրական հիմնարկություններ։ Արտադրության զարգացումն աստիճանաբար զրավեց և զեպի իրեն քաշեց ճորտատիրական լծի ծանրությունից դեռ նոր ազատված դյուզացիոնթյանը։ Որ ավուր ավելանում եր գյուղերից աշխատանքի յեկողների թիվը։ Այսպես, որինակ, յեթե ա/կ յերկաթագծի վրա 1880 թ. աշխատում եր 4000 բանվոր-ծառայող, 1885 թ. նույն տեղին աշխատում եր 5.500 հոգի, 1890 թ. 8253 հոգի իսկ 1911 թ. 12.376 հոգի։ Այսպիսի խոշոր աճում նկատվում եր ուրիշ արտադրողական արդյունաբերական հիմնարկություններում ևս։ Արտադրության և արդյունաբերության աճման հետ միասին զարգացավ ներքին և արտաքին վաճառականությունը ևս։ Արինակ, յեթե վեցցներու լինենք մարդանեցի արտահանությունը, 1871 թ. կազմում եր 0,887, իսկ 1900 թ. 619,93 հազար տոնն։

Առեւորական բարանսի դինամիկան 20 տարվա ընթացքում հետևալ փոփոխությունն ունեցավ։

Տարի.	Ներմուծում	Արտահանութ.	Շըտնառ դումարը
1870	16.477 հազ. ս.	3.923 հազ. մ.	15.400 հազ. մ.
1890	11.477 »	39.358 »	65.835 »

Այսպիսով, ինչպես յերեւում և այս ալյուտակից, 20 տարվա ընթացքում ներմուծումը աճել յե 43 տոկոսվ, իսկ արտահանությունը 900 տոկոսվ. ընդհանուր շրջանառության գումարը 250 տոկ.։ Անհիարագրելի շահագործություն եր տիրում գործարաններում և արհեստանոցներում։

ԲԵՆԴԱՐՆԵՐԻ ԱՅԽԱԾՈՒՄ ԵՅԻՆ 12—20 ԺՄ.

Ճիշտ ե, 1897 թ. հունիսի 2-ին հրատարակվեց մի կանոնադրություն, վորի համաձայն՝ բանվորու-

թյան համար սահմանվում եր 11½ ժամ ցերեկվա աշխատանք, իսկ 10 ժամ գիշերվա, սակայն այս կանոնադրությունը ձևականորեն միայն գոյություն ուներ։ Այս կանոնի հրատարակությունից հետո—ընթաթում, Մանթաշովի գործարանում աշխատում եյին 14—18 ժամ, իսկ նավթի գործարաններում անչափահանությունը ու յերիտասարդներն աշխատում եյին նույնքան ժամ, վորքան հաստկավորները։ *)

Անբավարար եր աշխատավարձը։ Որինակ, վորակավոր գարբիններն որական ստանում եյին 1 ս. 07 կ.—1 մն. 80 կոպ., փականակործները (ալեսար) 1 մն.—1 մն. 80 կոպ., սրանց ողնականները 50—77 կոպ., աշակերանները 27—61 կոպ., ինարկեցի այսպիսի գրությունը յերկար շարունակվել չեր կարող։ Այս դրությանը նպաստող հանդիսացավ այն հանգամանքը, վոր 1895—900 թ. մեզանում վոտք գրեց Սոցիալդեմոկրատական բանվորական կուսակցությունը։ Հակառակ այն բանին, վոր կառավարությունը ամեն կերպ հակառակում եր վորեւ իրավունք տալ բանվորթյանը նա ստիպված յեղավ վերջ ի վերջո զիջողությունը բանելու։ Այս զիջողությունը հետեւանք եր հենց իրեն, բանվորության մղած կատաղի պայքարի։ Ապացուցելու համար վոր այս այսպիս ե, ավելորդ չենք համարում առաջ բերել այստեղ այն զեկուցումը, վոր թիֆլիսի նահանգապետը ներկայացրել եր կառավարչապետ Գալիբյենին։

«Առաջներում—գրում և Գալիբյենին նահանգապետը—տարբեր գործարանների զանազան բանվորների

*) Տես Է. Ա. Պայտով, положение рабочего класса в России.

դրությունը նկարագրված եր լինում այնպես, ինչպես
վոր այդ դրությունը կա այսոր ևս, սակայն վերը հի-
շածս հիմնարկությունների բանվորության այսորվա
դրության զնահատականությունը տալու ժամանակ չը
պետք ե աչքաթող անհնք այս, վոր բոլորը, ինչ վոր
գոյություն ունի այսոր, դրա մեծ մասը բանվորու-
թյան կողմից ձեռք ե բերված վերջին 3—4 տարվա
ընթացքում և, պետք ե խոստովանեմ, աշխատանքի
պայմանների մեջ մտցված բոլոր այս բարելավու-
թյունները ձեռք են բերված վոչ թե այն անձների կամ
որգանների նախաձեռնությամբ, վորոնք նշանակված
են ֆաբրիկա-գործարանային տեսչության կողմից և
վորոնք ունեցին վերահսկողության իրավունք, այլ
հենց իրենց բանվորների ձեռքով, վոր ապացուցվում
է ներքե առաջ բերված տեղեկություններով» *):

Այսուհետեւ նահանգապետը նկարագրում է այն
կոիվը, վոր բանվորները մզում եյին 1899 թվականին:
Նահանգապետի այս խոստովանությունը մեզ համար
պարզում ե այն քաղաքականությունը, վոր վարում
եյին այն ժամանակվա կառավարության ներկայա-
ցուցիչները:

Բանվորության մզած նման պայքարը և աստի-
ճանական զարգացման ճանապարհի վրա կանոնելլը
պահանջ առաջ բերին հիմնելու արհեստ, միություն,
փոխադարձ ողնության (թաղման) դրամարկի և զրա-
դարաններ: Ինարկե այն ժամանակվա արհ, միությունը
նման չեր այսորվա մեր համացածին: Առաջին ատաղ-
ձագործների (գուրգար) արհեստակ, միությունը մե-

զանում հիմնվել է 1877 թ. հունվարի մեկին: Առա թե
ինչ ե գրում արս մասին Մ. Զ-լին:

«Յեթե հավատալու լինենք մի քանի հին արհես-
տավորների և նախշագիր Դավիթաշվիլու տված տեղե-
կությանը, զուրդարձների ու մյուս բանվորական ար-
հեստներում նկատված շարժումը և կազմակերպվելու
ցանկությունը առաջ ե յեկել դեռ 1866 թվականից:
Վերը հիշված արհեստավորների խոսքով 1867 թ. ամ-
բողջ Թիֆլիսի արհեստավորության համբարների առա-
ջաղեմ արհեստավորները հավաքվել են Որթաճալայի
այցիներից մեկում, վորակ «մատաղ» են արել և խո-
սկցություն են ունեցել արհեստավորների ակումբ
հիմնելու մասին: Յերկար խորհրդակցությունից հետո
հանձնարարել են յերեք հոգու, վորոնք պետք ե մշակե-
լին կանոնադրություն և ներկայացնեին մեծ իշխան
Միհամիլին հաստատելու համար, վորը և իրագործել
են: Կանոնադրության համաձայն ամեն մի անդամ
տարեկան պիտի վճարել վեց՝ ոուբի՛ անդամավճար:
Սյս փողով և քաղաքի կողմից հասցըված ողնությու-
նով հիմնել են արհեստավորների ակումբ: Ակումբն
ունեցել ե իր ժամանակին համապատասխան զրագո-
րան, ընթերցարան, բեմ, յերաժշտություն, խոհանոց-
ճաշարան և այլ հարմարություններ: Յուրաքանչյուր
անդամ իր ընտանիքով կարողանում եր գտնել ժամա-
նակին հարմարվող մտավոր զբաղմունք: Վորոշ ժամա-
նակ անցնելուց հետո, սակայն, անհայտ պատճառնե-
րով բանվոր արհեստավորներին մեկ-մեկ հեռացրին
այս տեղից և վերջը արհեստավորների ձեռքով հիմնած
այս հիմնարկությունն ընկալ խոշոր վաճառականների
ու չինովնիկների ձեռքը»:

«1877 թ. հունվարի 1-ին հիմնվեց գուրգարների
արհեստակ, միություն: Այդ ժամանակ Թիֆլիսում գո-

*) Տես յուր. „Օսвобождение“ № 15, 16, 39—40, 19 յան.
(1 փեր.) 1904 թ.

յություն ունեմ մի հայտնի արհեստանոց, վոր պատկանում եր Ֆ. Զեյցերին։ Արհեստանոցում աշխատում եյին 100-ի չափ արհեստավոր-աշակերտներ։ Այն ժամանակ սա համարվում եր ուսաշին արդյունաբերական հիմնարկությունը, և ահա այդ տեղ եր, վոր աշխատող արհեստավորները հաճախ խորհրդակցություններ եյին ունենալու իրենց ցավոտ հարցերի շառվել։ Այստեղի բանվորներն առաջինը փորձեցին միություն կազմել։ Այս միության նպատակն եր, ի միջի այլոց, հիմնել ընթերցարան և յերեկոները «շաբաշից» հետո ու կիրակի-տոնն որերին հավաքվել այստեղ և զբաղվել զբականության ընթերցանությամբ։ Այս նըղագույն կրագործեց։ Սկզբում միության մեջ աշակերտների հետ միասին հաշվում եր ընդամենը 15 հոգի։ Ըստրուց 6 հոգուց կազմված հանձնաժողով վորեց 4 հոգի արհեստավոր 2 աշակերտ։

Հանձնաժողովի մեջ մտնում եյին—Ի. Դավիթացիլի, Գ. Գոցիրիձե, Մ. Չողբէշվիլի, Ս. Գամզերիձե, Լ. Կասրաձե և Նիկո Մեգրելի։ Առաջին 3 հոգուն հանձնարարվեց ընթերցարանի կազմակերպումը, անդամավճարների հավաքումը, կիրակի-տոնն որերին զրքեր և լրագիրներ կարդալ միության անդամների համար։ Ընդհանուր զբամարկզի (զախլի) սդաբին յուրաքանչյուր անդամ վճարում եր 20 կոպ, անդամավճար։ Այս անդամավճարներով պետք ե ձեռք բերվեր ժամանակակից գրականություն։ 1878 թ. կազմակերպվեց ընթերցարանը և միության անդամների թիվը ել հասավ 80 հոգու։ Զեյցերի արհեստանոցից բացի, միության անդամներին ավելանում եյին այն ժամանակավարքանից ու աշակերտները։

Զեյցերը միշտ ունենամ եր 15—20 աշակերտ։ Աշակերտը պետք ե լինել 15 տարեկան և 4—6 տարվա-

ժամանակամիջոցում չեր տրվում վոչ մի վարձատրություն։

Սշակերտին տալիս եյին այն տեսակի կերակուր, վորպիսին մարդիկ շան ել չեն տալ ուտելու։ Կերակուրի մեջ սովորաբար լինում եյին ճիճուներ և հազար տեսակի ճանձեր ու բղեղներ։ Հացը սև հողի գույն, կարծես ցեխ լիներ, կը կտրեկը հացը և ել ինչ չեիր տեսնի մեջը և ել չոփեր ու խուշուրներ, թոկի կտորներ, ճանձ և այլ կիղտեր։ Զեյցերին սակայն այդպիսի կերակուրը շատ եր լավը թվում և նա շարունակ հայնում եր իր հացթուխին թե իրը հացը շատ և լավը թիում, աշակերտները շատ են ուտում և վաս պատճառում նրան։ Այս բոլորին ավելացրեք որական 15—16 ժամվա աշխատանքը և ճեր առաջ պարզ կը պատկերանա թե ինչ զրության մեջ եյին գտնվում աշակերտները։ Ահա այսպիսի զրության մեջ գտնվող աշակերտները յերկարատև աշխատանքից հոգնած-քաղցած զարմանալի չե, վոր անում եյին հանցավոր քայլեր և խսկապես, յեթե ամառն եր, զիշերով մտնում եյին Միքայելյան փողոցի վրա զանվոր մրգի այգիները, զողանում եյին մրգեր, ու մեջովներով տանում փոխում հացի հետ ու դրանով գոնին ժամանակավորապես կշացնում ստամոքսները։ Թեև շատերին եժան չեր նստում այսպիսի արարքը, վորովիետև կամ այգեպանն եր բըռնում, կամ վոստիկանությունը և կամ հենց ինքը Զեյցերն եր լավ գնքում նրանց։ Ել վոչ վոր չեր ել հետաքրքրվում իմանալու թե ինչն եր ստիպում աշակերտներին գողություն անելու։ Սրա փոխարեն աշակերտներին կամ անխղճորեն ծեծում եյին և կամ բանտարկում տներում։ Որինակ, Զեյցերն իր տանն ուներ բանտի վերածված մի տեղ, վորտեղ բանտարկում եր

մեղավոր աշակերտին և քաղցած ծարավ պահում 3—4 որով, կամ հանձնում վոստիկանությանը: Հենց այս եր պատճառը, վոր 1877 թ. սեպտեմբերի 1-ին աշակերտությունը հայտարարեց գործադուլ.. վոր զեկավարում եր այն ժամանակվա արհեստ. միությունը. Աշակերտները իրենց խազեյնին ներկայացրին հետեւալ պահանջները.

1. Վորպես հացի գին—յուրաքանչյուր աշակերտի վճարել որեկան 20—30 կոպ.:

2. Վորպես հագնելիքի գին ամսական յուրաքանչյուր աշակերտի վճարել 2 ոռոք. 50 կոպ.:

3. Զասեական հս (գիշերային աշխատանքի ըսկիզբը) փողով վճարել աշակերտներին:

4. Արգելել աշակերտներին աշխատաեցնել կերակի և տոն որերին*):

Աշակերտների այս պահանջները բավարարվեց մովին:

Որև. միության ղեկավարությամբ 1877—78 թ. գործադուլ հայտարարեց գործարանի ամբողջ բանվորությունը:

Այս յերկար մեջ բերումն այն նպատակով արինք, վոր ընթերցողին ծանօթացնենք. արհ. միության ծագման հետ, վորն ինչպես տեսնում անք, զեկավարում ենին բանվորներն իրենք:

Ինչ վերաբերում է փոխադարձ ոգնության և թաղման դրամարկղներին, վորոնք գոյություն ունեյին Անդրկովկ. յերկաթուղային վարչության, քաղաքային և պոստ-հեռագր. վարչություններում, որանք ավելի

շուտ խոշոր չինովնիկների որգաններ ելին, վորոնք նըսպատակ ունեյին «սե որվա համար» վող խնայելու:

Չի կարելի ստկայն, անուշաղբության մատնել այն փաստը, վոր մեզանում բանվորները ևս ձեռնարկեցին փոխադարձ ողնության զբաժարկղներ հրմանելու. որինակ Աղելիանովի գործարանի և յերկաթուղային բանվորներն ունեյին իրենց զբաժարկղները և փոխադարձաբար ոգնում եյին միջանց:

Այս դրամարկղները դրավեցին այստեղի առաջադեմ ինտելիգենցիայի ուշագրությունը: Նրանք մտածում եյին այդ դրամարկղների միջոցով բանվորության մեջ տարածել սոցիալ-դեմոկրատական ուսմունքը: Իրը թե դրամարկղների գործերի համար, նրանք հրավիրում եյին բանվորական ընդհանուր ժողովներ և հորդորներ կարդում այսեղ: Այսպիսով դրամարկղները վերածվեցին անտեսական կամի որգանների. բանվորական գործադուլները կազմակերպվում եյին հենց այդ դրամարկղների միջոցով: Այսպիսի խոշոր գործադուլներ սկսվեցին 1898 թվականից: 1898 թ. գեկտ. 14-ին տեղի ունեցավ յերկաթուղային գործադուլը և այսպիսով «առաջին անգամ Ռուսաստանում կանգ առավ յերկաթուղու գնացքների շարժումը *), 1899 թ. առաջին անգամ գործադուլ հայտարարեցին Աղելիանովի գործարանի բանվորները: 1900 թ. համարյա թե միաժամանակ գործադուլ արին. — Ենֆիաջյանցի, Բոզարջյանի, Յարալյանի, յերկաթուղային գլխավոր արհեստանոցի և ուրիշ ֆաբրիկաների և գործարանների բանվորները **): Նույն տեսակի գործադուլներ տեսնում

*) Л. Мартов. „Развитие крупной промышленности и рабочее движение в России“.

**) Տես ժուրնալ „Освобождение № 15—16—39—40 19 յնվ. (1/II) 1904 թ. стр. 308“.

*) Տես ժուրն. «Մողագործ», 15/V 1910 թ. № 5 յերես 14.
№ 6 յերես 13.

ենք Քութայիսում, Բաթումում, Ճիաթուրում և այլ
քաղաքներում։ Բոլոր այս գործադրուները, ինչպես
ասացինք, հաստատում եյին բանվորական միություն-
ներ սուեղծելու անհրաժեշտությունը։ Վորպես կազմա-
կերպման առաջին որդաններ համարվում եյին գործա-
դրւային գրամարկղները, և սոցիալ-դեմոկրատական
որդանների գաղտնի բջիջները, խակ հետազայտմ աստի-
ճանաբար բանվորության մեջ հղացավ այն միուրը,
թե ամեն մի արհեստի համար կազմակերպվի միու-
թյուն և զոր այդ միությունները ղեկավար հանդիսա-
նան բանվորների և ծառայողների անտեսական պայ-
քար-կոփշերին։

Հստ արհեստի այսպիսի միություն առաջինը
1903 թ. կազմակերպեցին անային ծառայողները և
մանկաբարձուէիները։ Տնային ծառայողները ավելի
վաղ են մտածել միություն հաստատելու, բայց նրանց
չի աջողվել այդ նպատակն իրագործելու։

Դեռ 1886 թ. բանաստեղծ Ակակի Շերեթելին վա-
սիլ Վիբսալաձեյի խնդիրքով *) կազմել ետնային ծա-
ռայողների միության առաջին կանոնադրությունը,
բայց գոյություն ունեցող պայմանների շնորհիվ, ան-
հար ե յեղել միության կազմակերպումը։ Խակ 1903 թ.
իրագործվեց այդ Այսպիսով, մինչև 1905 թ. մեզա-
նում բառիս բուն իմաստով արհեստ, միություններ
գոյություն չեն ունեցել, յեթե նկատի չառնենք Զեյ-
ցերի բանվորների, անային ծառայողների և մանկա-
բարձուէիների արհեստակցական կազմակերպություն-
ները **). Նրանց գոյության սկիզբը պետք ե համարել

*) Տես Կոմմունիստ լրագիր № 174 (1719) 1926 թ. 1/VIII
Վիբսալաձեյի հիշողությունները Ակակի մասին։

**) Զեյցերի նյութեղենի բանվորության արհմիությունը
ուժվեց 900-ական թվականին։

1905 թ.: Այստեղից ե սկսվում մեզանում արհեստ,
միությունների, վորպես բանվոր դասակարգի պայքա-
րի կազմակերպությունների գոյությունը և այդ թվից
ել սկսվում ե ժամանակակից արհ։ միությունների
շարժման պատմությունը, թեև ինչպես վերև ասացի,
նրանց գոյության սկիզբը տեսնում ենք ավելի վաղ
ժամանակներում։ 1905 թ. արհեստակցական միու-
թյուններ հիմնվեցին Վրաստանի հետեւալ կետերում։

Թիֆլիսում, Բաթումում, Քութայիսում, Ճիաթու-
րիում, Փոթիում և Սղնախում։ Ավելի վորքը միություն-
ներ գոյություն ունեցին Ողուրդեթում, Գորիում, Լանչ-
խութիում և այլ տեղերում։ Դրանք չափից զուրս թույլ
կազմակերպություններ եյին և վոչ մի աչքի ընկնող
գեր չեն կատարել մերժարհմութ։ շարժման գործում,
յեթե նկատի առնելու չը լինենք նրանց կազմակերպած
մի քանի գործադրությունները։

Վերը հիշված արհեստակց. կազմակերպություն-
ներից, ամբողջ Վրաստանում ինչպես և Սնդրկովկա-
սում ամենից ուժեղ միություններ գոյություն ունե-
ցին թիֆլիսում միայն։ Թիֆլիսի արհմիությունների
գոյությունն սկսվում ե 1905 թվից այսինքն «ազա-
տութիւց» *):

Սրբնիությունները Թիֆլիսում 1905 թ. գործում
եյին լրացած յեռանգով։ Սոցիալ-դեմոկրատ բանվոր,
կուս, գեկարությամբ այդ արհ։ միությունները կազ-
մակերպում եյին քաղաքական խոշոր գործադրություն-
կոչ անելով բանվորությանը միանալ հեղափոխության
համար կոիվ մղող ընկերներին, սակայն սեացիայի
խեղդիչ սեժիմը դանդաղեցրեց արհմիությունների շար-

*) Տես վրաց ժուրնալ «Ախալ քվելանա» № 14, 1907 թ.
ի. Բ-ժեր հոդվածը.



ժումը: Իհարկե, ռեակցիան չը կարողացավ վոչնչացնել նրանց և մենք 1906 թվականից նորից տեսնում ենք վերածնված միությունները: Այս բանը տեղի ունեցավ հետեւյալ պայմաններում: ինչպես գերեւ ասուցինք ռեակցիան քայքայեց, վազնչացման հասցրեց բանվորական միությունները և անլեզալ պայմանների մեջ զբեց նրանց: Կառավարության այսպիսի դործունյությանը բանվորները պատասխանում ենին կովով, վորի հետեւանքով ամբողջ Ռուսաստանում զորեղանում եր գործադուլների ալիքը, այսպիսի զրությունն ստիպում եր կառավարությանը վորպեսզի նա բանվորներին խաբելու համար վորոներ վորեն նոր միջոց: Յեզ նա այս նպատակով հրատարակեց 1906 թ. մարտի 4-ի օրենսդրությունը: Այս կանոնի համաձայն «արհեստակցական միությունների նպատակը կազմում եր տնտեսական շահերի պարզումը, փոխադարձ համաձայնությամբ իրենց անդամների միջև լավացնելու նրանց պայմանները, աշխատանքի և կապիտալի շահերի հետ խաղաղ ճանապարհով համաձայնեցնելու միջոցով» *): Այսպիսով արհետիությունները զինաթափ են լինում և զրկվում պայքարելու հնարավորությունից: Նրանք հնարավորություն չունեյին զործագուլներ հայտարարելու: Բացի այդ, միություններ կազմակերպել — հիմնելու իրավունքն անցնում է նահանգապետների և վոտիկանության ձեռքը: Փանդարմերիան աշխատում եր, վորպեսզի վորքան կարելի յե քիչ թվով հիմնվեր արհետակցական միություններ:

Չը նայելով այս բոլորին, Թիֆլիսի արհետիությունները յետ չեյին նահանջում, նրանք մշակում

*) Տես Դ. Անտողինի «արհետակց. շարժումը Ռուսաստանում» Վրաստ. պրոֆեսոր. հրատար. 1923 թ. յերես 32:

եյին կանոնազրություններ, գիմում եյին նահանջապետին ու լեզակ կամ կեն լեզակ կերպով շարունակում գործել: Ռեաքցիայից ձնչված արհմիությունները, ինչպես ասացի, նորից սկսում են ուժեղանալ և այնքան են ամբազնդում, վոր կարողանում են հիմնել թիգիւրում «Արհետակց. միությունների բանվորական դեպուտատների խորհուրդ» **):

Այդ ժամանակ արհմիություններում աշխատում եր յերկու կաւակցություն. — մեծամասնականներ և փոքրամասնականներ: Ճիշտ ե, գաշնակցականներն ել ունեյին վորոշ ազգեցություն (որինակ գաշնակցական միության հիմնումը), բայց սա աչքի ընկնող յերեւությ չեր: Արհետակց. միությունների վերաբերյալ մեծամասնականների և փոքրամասնականների մեջ յեղած հասկացողությունների տարբերությունը զիմավորապես կայանում եր հետեւյալում: Մեծամասնականները արհմիությունների համեմատությամբ, վորպես պրոլետարիատի գասակարգային կազմակերպության բարձրագույն փորձ, ընդունում եյին պրոլետարիատի քաղաքական կուսակցությունը և կարեռ եյին համարում հիմնել սոցիալիստական այնպիսի միություններ, վորոնք մղեյին վոչ թե նեղ արհետակցական պայքար միայն, այլ և գասակարգային կոփի *): Մեծամասնականներն արհմիությունների մշտական դեկավարության համար անհրաժեշտ եյին համարում հենց միությունների մեջ հիմնել գրակցիաներ:

**) Տես Ի. Բ.-Ճ. «Անդրկովկասյան քաղաքների կենտրոնական բյուրոների ներկայացուցիչների խորհրդակց. հաշիվը ծուրնալ «Ենոր աշխարհ» № 14, 23/IX 1907 թ.:

*) Տես Դ. Անտողինի «Արհետակց. շարժումը Ռուսաստանում» Վրաստ. պրոֆեսոր. հրատար. 1923 թ. յերես 32:

իւկ Փոքրամասնականները միտեսակ առաջնություն ելին տալիս ինչպես քաղաքական կուսակցությանը, այնպես և արհեստակցական միություններին:

Կարծիքների այս տարբերությունը մեզանում առաջ բերեց խոշոր վիճաբանություն: Մեծամասնական բանվորները ձեռք ելին բերել այն ժամանակվա արհեստակց. միությունների որգան «Ախալի դրուբա» (նոր ժամանակ) թերթը և սրա միջոցով՝ պայքար ելին մղում հակառակորդի դեմ: Մեծամասնական ֆրակցիան այնքան ուժեղացավ, վոր այն ժամանակ դրյություն ունեցող 34 արհմիություններից 20 յինթակա եր մեծամասնականների ազգեցությանը: Այս փաստը չի հերքում այնպիսի հայտնի փոքրամասնական, ինչպիսին եր համայն Ռուսաստանի առաջին խորհրդի նախագահ Գրինեվիչը **): Նա իր «բանվորական արհեստ. միություն. շարժումը» վերնազրով հաստահատոր գրքում ասում է. «Թիֆլիսի բոլոր արհեստ. միությունները բացառապես գտնվում են մեծամասնականների ձեռքում»: (Տես վրացերեն հրատարակության 312 յերեսը):

Մեծամասնականության այս տեսակի ուժեղանալը գրավեց փոքրամասնականների կուսակցության կենտրոնական կոմիտեյի ուշադրությունը: Այս մասին գոյություն ունեն բազմաթիվ հոդվածներ արհեստ. միությունների մասին նրանց ունիցած տեսակետը պարզաբանող:

1907 թ. մայիսին հրավիրվեց արհմիությունների առաջին կոնֆերենցիան:

**) Գրինեվիչը Ռուսաստ. արհեստ. շարժման աչքի ընկնող գործիչներից մեկն եր. հիմա գտնվում ե եմիգրացիայում և այնդինք կուիդ և մղում խորհրդ. յերկրների արհմիութ. շարժման գեր:

Այդ ժամանակ համայն Ռուսաստանի արհմիությունների միությունը պատրաստվում եր Ռուսաստանի արհմիությունների համագումար հրավիրելուն: Նա զրությունները ուղարկեց բոլոր միություններին նախնական աշխատանքներ կատարելու և պատրաստվելու համար:

Այս հանգամանքը ևս նպաստեց Թիֆլիսի արհմիություններին իրենց առաջին կոնֆերենցիան հրավիրելու:

Ինչպես նկարագրում է ի. Բ-ձեն, «այս կոնֆերենցիայի համար միություններն առանձին պատրաստություն չեն ունեցել. մի զիսավոր նպաստակով եր հրավիրվում կոնֆերենցիան. պետք եր փոփոխել այն վասակար քաղաքականությունը՝ վորը միությունների մեջ պաշտպանում եր նրա կենտրոնական խորհուրդը ու գրա փոխարեն մշակեր անկուսակցական միությունների խկական քաղաքականություն» *):

Այս «մշասակար» քաղաքականությունը մեծամասնականների պայքարն եր, վոր արհմիությունները մտնելին նրանց կուսակցության դրոշակի տակ:

Կոնֆերենցիան լեզալ եր. Նրան մասնակցում եր այն ժամանակվա քաղաքազում Խատիսյանը: Առաջին յերկու նիստերը կարողացան մանդատները միայն հաստատել: Յերրորդ նիստը քննեց. 1) մայիսի մեկի տարակատարությունը և 2) Թիֆլիսի բոլոր կուսակցությունների (բացի պատրիոտներից) ներկայացուցիչներին կոնֆերենցիա հրավիրելու հարցը:

Առաջին հարցն առանց վիճաբանության, համարյա միաձայն, ընդունվեց. վորոշվեց հայտարարել մի

*) Տես վրաց. ժուրն. «Մեր աշխարհ» № 1—1917 թ. 24/VI ի. Բ-ձե «Թիֆլիսի արհմութ. I կոնֆերենցիան»:

որվա գործադուլ և կոնֆերենցիայի անունով ժողովի հարկավոր գումարը: Բոլոր կուսակցությունների նիրկայացուցիչներին կոնֆերենցիա հրավիրելու հարցն առաջ քերեց յերկար վիճարանություններ: Յերեք տեսակի կարծիք առաջ յեկալ արդ հարցի շուրջը:

1. Վորովիհետեւ մեր միությունները և կոնֆերենցիան ևս անկուսակցական են, ուստի պետք ե հրավիրել Թիֆլիսում գոյություն ունեցող բոլոր քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչներին:

2. Նոյն կարծիքի և նույն նկատառությունը համաձայն չը հրավիրել և վոչ մի քաղաքական կուսակցության ներկայացուցիչ, այլ հրավիրել միմիայն արհմիության շարժումն ուսումնասիրած անձերի:

3) Թեև անկուսակցական և մեր կոնֆերենցիան ևս սակայն անկարելի յե, վոր մենք բոլոր կուսակցություններին ել միատեսակ վերաբերմունք ցույց տանք, զբա համար ել հարկավոր և խորհրդակցական ձայնի իրավունքով հրավիրել այնպիսի քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների, վորոնց, զիտակցաբար թե անգիտակցաբար, կողմանից են քաղաքական լայն մասսաները.—այսպիսիները Թիֆլիսում սոցիալ-գենոկրատներն ու դաշնակցականներն են միայն *): Այս վերջին կարծիքն այն մասին, թե իրը դաշնակցականները զրավիլիս լինեն պրոլետարիատի հարգանքը, ինարկե ձիւտ չեր, այս ժողովում նրանք ունեյին դերձակների միության դաշնակցական ներկայացուցիչներ, վորոնց և պատկանում եր այդ կարծիքը:

Ժողովի ընդունեց յերկրորդ կարծիք—առաջարկը և հրավիրեց արհմիութ. շարժումն ուսումնասիրած անձերի:

*) Տես նույն յերես 8:

Ժողովը մշակեց Թիֆլիսի արհմիությունների 1 կոնֆերենցիայի որակարգը, ուր հետևյալ հարցերն ենին դրված:

1. Խորհրդի զեկուցումը:
2. Կուսակցական, թե անկուսակցական միություններ:

3. Պրոպրեցիոնալ ընարություններ, թե ամեն մի միությունից հավասար թվով:

4. Կոուտացիա:
5. Միությունների լեզարդումն:
6. Միությունների լոգունգը:
7. Գրականություն:
8. Պրոպրեցանդիստների կուեգիա:
9. Տոկոսների սահմանավորում կենտրոնի համար:

10. Գործազուրկների կազմակերպություն:
11. Կապ լեզար միությունների հետ:
12. Կենտրոնի անունը:
13. Տոն որերի հանգստի խնդիրը:

14. Կապ գավառային միությունների հետ:
15. Արհմատը, թե արտադրությունը նկատի առնել միություններ հիմնելիս:

16. Համայն թուսաստանի արհմիությունների համագումարը:

17. Կովկասյան արհմիությունների շրջանային կոնֆերենցիա:

18. Ընտրությունները:
Կոնֆերենցիայի տառաջ միանգամայն անզարություն գտնվից արհմատակցական միությունների կեպուտատների խորհուրդը նա վոչ զեկուցում եր պատրաստի և վոչ ել զեկուցանող ուներ: Դրա համար ել

կոնֆերենցիան առաջարկեց խորհրդի անդամներին ընտրել իրենց միջից յերկու զեկուցանող, վորոնք, կը ծանոթացնելին խորհրդում տիրող հոսանքների հետ:

Այս կոնֆերենցիայի հաշվեավության մեջ կարգում ենք հետևյալը. — «Նրանք ել (խորհրդի անդամները) ընտրեցին յերկու զեկուցող խորհրդում տիրող յերկու հոսանքներից. Զեկուցումը հետաքրքիր եր նրանով, վոր յերկու կողմն ել խոստովանում եր խորհրդի անդորրունեաւթյունը. Վորոշ ամիսների ընթացքում համարյա վոչինչ չեր արել: Վոչ մի ոգնությունն չեր ցույց տվել միությունների արհեստակցական շարժումն ուժեղացնելու գործում: Չեր կազմակերպել և վոչ մի նոր միություն (այդ ժամանակ գոյություն ունեցին շատ միություններ), չեր ոգնել թույլ միությունների ուժեղանալուն: Նրա գործունեյության դրական կողմն այնքան եր աննշան, վոր այդ մասին խոսել անգամ չարժեր. — զերծակների միությանը դրամական ոգնություն եր տվել 100 ռուբլի, անգործների ողտին հավաքում եր փող, վորով ծխախոտի գործարանների բանվարութիւնությունը լուրջ և ցավոտ հարցեր քննելու համար ժամանակ չեր ունենում, նա իր ամբողջ ույժը նվիրում եր քրակցիոններական և անձնական ասել կոսեների»:

Կոնֆերենցիան այսպիս և ընորոշում այն ժամանակված խորհրդի գործունեյությունը:

Հետեւյալ ժողովը քննեց մասցող բոլոր հարցերը, վորոնց վերաբերյալ վոչ մի նյութ չունենք, բացի ընդունած բանաձևից:

Միայն ընդունված բանաձևերից կարելի յի իմաստ կոնֆերենցիայի կարծիքը: Քննության առնված

հարցերը թաժանվեցին չորս մասի, վորոնց ամեն մեկի համար նշանակվեց առանձին զեկուցող: Այս ժողովում քննության չեն առնվել հետեւյալ հարցերը. կուսակցական և վոչ կուսակցական միություններ. միությունների լեզվացումն և լեզալ միությունների կապը վոչ լեզալ միությունների հետ: Այս հարցերի չափազանց հետաքրքրական լինելու պատճառով կոնֆերենցիան վորոշեց նվիրել նրանց քննությանը չորսորդ հատուկ ժողով: «Կուսակցական թե անկուսակցական արհմիություններ» հարցը առաջ բերեց բուռն վիճականություն: Այստեղ հրապարակ յեկավ յերկու հոսանքը. Մեծամասնականների և փոքրամասնականների: Զեկուցանողը պատկանում եր մենշեկլյան բանակին *) և այդ պատճառով ել նա ամբողջապես պաշտպանում եր այն տեսակեանները, վորոնց կողմնակից եյին նրա լիդերները:

Ինչպես վերև հիշեցինք, մեծամասնականներն ուղղում եյին հիմնել այնպիսի արհմիություններ, վորոնք վոչ թե նեղ արհեստակցական պայքար են մղում, այլ իրենց ամբողջ ույժը մղում են զասակարգային կովի կողմը: Փոքրամասնական զեկուցանողի համար այդ կետը ընդունելի չեր և նա ամեն կերպ աշխատում եր

*) Այստեղ պետք է ցավակցաբար հիշենք, վոր կոնֆերենցիայի զեկավարների և կազմի վերաբերյալ շատ քիչ տեղեկություններ ունենք ձեռքի տակ: Գտնված և վոչ մի ժամանակթում չեն զեկավարների ազգերը: Առանձին հարց ու փորձից պարզվեց, վոր նախագահը պետք է յեղած լինել Եմիլ Սիրբիաձեն:

Վորոնեց հրավիրված կողմեր կոնֆերենցիային պետք են երկա լինելին Ստալինը, Միխա Յիսկայան, Փիլիպ Մահարաձեն (բալեկիններից); նոյ ժողովնախա, Սելի Զուգելին, Կ. Նինիձե, Ի. Բաղրամյան և ուրիշներ (մենշեկլյաններից): Այս հարցը դեռ վերջնականապես չի պարզված:

գեկուցման մեջ զանցառության տալ «կուսակցական արհմիությունը» և պաշտպանել ովորտյունիստական միության գոյությունը: Զեկուցանողը մյուս կողմից, ճիշտ է, յերկերեսանիորեն պաշտպանում եր այն գիծը ևս, վոր միությունները չեն կարող հեռու մնալ քաղաքական խնդիրներից և վոր նրանք ստիպված կը լինեն խտանվել քաղաքական կոփլաներին *):

Կոնֆերենցիայում մեծամասնական ֆրակցիայի անդամների քչության պատճառով անցավ զեկուցանողի կարծիքը (ներքեւ տես բանաձեր):

Այս նոր ժողովում քննվեց նաև միությունների լեզվագրացիայի խնդիրը: Զեկուցողի կարծիքով միություններն անհրաժեշտորեն պետք է լեզվալ դառնային մարտի 4-ի որենքի հիմունքով: Նրա կարծիքով անլեզվալ միությունների գոյությունն այնքան ել կարելի չեն, վորովհետեւ նա չի կարող կատարել իր պարտականությունը «քանի գեռ բանվորների մեծ մասը գեռ այնքան համարձակ ու գիտակից չեն, վոր կարողանա գործել անլեզվալ կերպով»:

Հակառակությ կողմը մեծամասնականները, ընդհանրապես գեմ չեյին լեզվալ միություններին, բայց նրանք անհրաժեշտ եյին համարում անլեզվալ միությունների գոյությունը են: Նրանց կարծիքով «լեզվալ գործելը լավ բան է, բայց այսորվա պայմաններում անհնար: Մարտի 4-ի որենքով թե և կարելի յե միություններ հիմնել բայց հենց վոր միությունը կակսի գործել, կառավարությունն իսկույն կը փակե այն... Ընդհանրապես այդ որենքը այնքան է այլանդակ, վոր նրանից ոստիվել բանվորները չեն կարող: Այսորվա

պայմաններում անհրաժեշտ և անշեղալ գործունեյություն»: Այսպես եր մեծամասնական բանվորների կարծիքը: Կոնֆերենցիան չը կարողացավ գնաել այս հարցը, և վորոշեց: «Հանձնել այս հարցը միություններին պարզելու, թե ինչպիսի ձևով կը կարողանան նրանք հարաբերություններ ունենալ մյուս միությունների հետ»:

Կոնֆերենցիային մասնակցում եյին 35 միության ներկայացուցիչ, վորոնցից 4-ը զավառից: Դիւկատաների տեղեկությունով կոնֆերենցիային մասնակցում եր 10.903 կազմակերպված բանվորների ներկայացուցություն: Կոնֆերենցիան կայացրեց հետեւյալ վորոշումը:

I. ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՅԵՎ ՎՈԶ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԱՐՁԵՍԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՍԻՆ.

Նկատի առնելով, վոր անտեսական պայքարը, վոր մղում են արհմիությունները, միայն այն ժամանակ կարող է բարեկալել բանվոր դասակարգի նյութական դրությունը, յերբ այդ համաձայնեցրած կը ինչ պեղութարի քաղաքական պայքարի հետ, իսկ պայքարի սկզբնական շրջանում արհեստակց, միությունները ստիպված են պաշտպանել իրենց գոյության իրավունքները. մյուս կողմից, նկատի առնել այն, վոր կապիտալը առանց ազգի, դավանության և քաղաքական համոզմունքի խորության միատեսակ կերպով ձնշում ու քերթում ե բոլոր բանվորներին՝ Թիֆլիսի արհեստ միությունների առաջին կոնֆերենցիան անհրաժեշտ և դանում բոլոր բանվորների միությունը մի անկուսակցական արհեստակց, կազմակերպության մեջ, վորպիսվի նրանք այսպիսով կարողա-

*) Տես վրաց ժուրնալ «Նոր աշխարհ» № 2, 1907 թ.

նան աջող կերպով պաշտպանել իրենց անտեսական շահերը և ձեռք բերեն քաղաքացիական ու մարդկային իրավունքները:

II. ԱՐՁԵՍԱԿՑԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԳԱԼՈՑ-ՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.

Թիֆլիսի արհմիությունների առաջին կոնֆերենցիան հայտարարում է, վոր 1906 թ. արհեստ, միությունների վերաբերյալ մարտի 4-ին հրատարակած որենքը—չը նայելով իր բազմաթիվ պակասություններին, այնուամենայնիվ հնարավորություն և առաջի արհմիություններին ավելի թվով անդամներ զրավելու և, ընդհանուր տնտեսական շահերի հիման վրա հեշտացնում և բանվրական լայն մասսաների մեջ պրոպագանդա մղել և ագիտացիա անել այդ մասսաներին միացնելու նպատակով ու այսպիսով նրանց լծում և կապիտալիզմի դեմ մղվող դասակարգային կավին, ցանկալի և նպատակահարմար գոտնում միությունների լեզարացումը:

III. ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼԵԳԱԼ ԱՐՁԵՍԱԿՑԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ.

Թիֆլիսի արհեստ, միությունների առաջին կոնֆերենցիան գտնում է, վոր արհմիությունների շարժման համար խոշոր նշանակություն ունի բոլոր թե լեզար և թե անլեզար արհմիությունների միացնելը մի կենտրոնական որդանում: Սակայն միաժամանակ նկատի առնելով գոյություն ունեցող վոստիկանական պայմանները՝ փորոշում ե. —լեզար կազմակերպություններն իրենք են մշակում միությունների կենտրոնի հետ ունենալիք հարաբերության ձևն ու բնույթը նրանց հետ համաձայնության գալով:

IV. ԱՐՁԵՍԱԿՑ. ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈԶՈՒՆԳԸ.

Վարովհետեւ գոյություն չունի այնպիսի լոզունգ, վորը գործադրելիս չը լինի այս կամ այն քաղաքական կազմակերպությունը, առաջին կոնֆերենցիան Քըպատակահարմար և համարում առայժմ չընդունել և վոչ մի լոզունգ:

V. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲՅՈՒՐՈՅԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.

Կոնֆերենցիան լսելով զեկուցումն այն մասին, թե ինչ ձևվ պետք է կատարվեն միությունների կենտրոնական բյուրոյի ընտրությունները՝ վորոշեց. — կենտրոնական բյուրոյի ընտրությունները պետք է կատարվեն պրոպրցիոնալ ձևով հետեւյալ նորմայի սահմաններում. — 300-ից ավելի անդամ չունեցող միությունը բյուրոյում ընտրում և մի ներկայացուցիչ. 1.000 անդամ ունեցող միությունն ընտրում և յերկու ներկայացուցիչ, մնացող միությունները վորքան անդամ ել ունենան, ընտրում են բյուրոյում — յերեք ներկայացուցիչ:

VI. ԿԵՆՏՐՈՆԻ ԱՆՈՒՆԸ.

Թիֆլիսի արհեստ, միությունների կենտրոնական հիմնարկության անունը կոչվում է —

«Թիֆլիսի արհեստակց. միությունների կենտրոնական բյուրո»:

VII. ԿՈՌԴՏԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ.

Վերացնել կոռպատացիայի իրավունքը ընտրովի հիմնարկություններում:

VIII. ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԱՐՅԵՍ. ՄԻՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐ՝ ՀԱՅ ԱՐՅԵՍԻ ԲԵ ՀԱՅ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ:

Կոնֆերենցիան քննության առնելով արհմիություններ կազմակերպելու ձեր խնդիրը անհրաժեշտ է համարում թի մեկ և թե մյուս տեսակի կազմակերպությունները հիմնել արտադրողականության բնավորության համաձայն:

Միաժամանակ կոնֆերենցիան գտնում է, վորը ըստ արտադրողականության արհմիություններ հիմնելը նպատակարամար և մանավանդ խոշոր կազմակերպութական արտադրողական ձեռնարկներում:

IX. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.

Կոնֆերենցիան անհրաժեշտ է գտնում յերեք լեզվով շարաթաթերթ հիմնելը, վորի նպատակը պետք է լինի հատկապես արհեստակցական շարժման խողոք լուսաբանումը:

Այս նպատակով թիֆլիսի արհմիությունների կենտրոնական բյուրոյին կից պետք է հիմնել յերկու հանձնածողովով գրական և հրատարակչական: Յեթե վորեա միություն կարող կը լինի հրատարակել սեփական որդան, սա պետք է համարել համակրանքի արժանիք:

X. ՏՈՎՈՍՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՄԱՐ.

Ահեստ միությունների նախակին վորոշումն այն մասին, վոր կենտրոնի ոգտին միությունների ամսական յեկամուտից սահմանվի 10 տոկոս, մնում է իր ույժի մեջ մինչև կենտրոնական բյուրոյի կանոնա-

դրության և գունկցիաների նորից քննության առանցքությունը:

Այսպիսով հաղթող հանդիսացավ այն կողմը, վորը գտնում էր, վոր միությունները պետք է հիմնվեն մարտի 4-ի որենքի համաձայն: Աեակցիայից հետո մենաշիներն ուղղում եյին ոգտվել զրանից ու իրենց ամբողջ գործունեյությունն իրագործել արհմիությանների միջոցով: Բայց քնած չեյին կառավարության ագենտները, վորոնք աստիճանաբար փակում եյին բանվորական միությունները: Արինակ, տպագրողների թիֆլիսի բանվորական արհ, միությունը փակվեց նրա համար, վոր «կողմնակի անձինք դալիս եյին և համախտեցին ունենում ժողովներ» ^{**}):

Նույն վիճակն ունեցան մի քանի այլ միություններ ևս չետաքրքիր և միությունների անդամների քանակը կոնֆերենցիայից հետո ձիւտ և, թիֆլիսում գոյություն ունեցող 34 արհմիություններից 10 միության անդամների մասին միայն տեղեկություն ունենք, բայց, կարծում եմ, յեղածն ել բնորոշիչ կարող և համարվել:

Բացակայում են մնացած միությունների մասին թվական տեղեկություններ: Ինչ վերաբերում և գավառին, թվական տեղեկություններ ունենք Քութայիսի արհեստ, միությունների վերաբերյալ ^{***}):

*) Տես վրաց «Լախվարի» լրագրի 1907 թ. № 41-ը

**) Տես վր. Ժուրն. «Արալի քվեղանա» 1907 թ. № 8 յեր. 8:

***) Պրօֆէս. վեշնիկ, համ. Ռուսաստանի արհեստական միությունների որդան, 1907 թ.:

Թիֆլիսի միությունները

Բանվորների հաճախ թիվը տառապահների	Ընդ- հաճախ թիվը (միությունների)	Արհեստականական միությունների անդամական
		նմբ.

1. Ելեկտրո-մեխանիկ. միություն.	250	100
2. Կար անողների	»	600 321
3. Պարիկմախ.-քարտ	»	90(*) 87
4. Սղոցողների	»	135 60
5. Նկուղներում աշխատ.	»	1000 60 ³⁾
6. Զըմուղի բանվորների	»	120 86
7. Թիֆ. ապր. կայար. բան.	»	250 87
8. Փայտի վրա աշխատող.	»	714 144
9. Վառել. վրա աշխ. բան.	»	» 69
10. Նավթկայ. բանվ.-ծառ.	»	300 89 ⁴⁾

Քուրայիսի միություններ

1. Բուլկի թթողն. միութ. հիմնվ. 1906	40	25
2. Զինգերի ծառ.	»	1906 30 30
3. Տնային	»	» 1907 1000 108
4. Տպագրողների	»	» » 21 21
5. Ծխախոտի բանվ.	»	» » 42 19
6. Գործակատարն.	»	» » 340 200

³⁾ Նկուղներում աշխատող բանվորների մի մասը մտնում եր ժառայրների միության մեջ:

⁴⁾ Տես վրաց ժողով. «Ախալք քվեղանա» № 8, 1907 թ.

Քութայիսի բանվորության 30 տոկոսը մտնում է միացյալ միությունների մեջ: Բացի զրանից նույն ժամանակ հիմնված ե յեղել կաշկարանների, կարանունների և «սատալյարների» միություններ, բայց դրանց մասին չը կան տեղեկություններ^{*)}:

Այսպիսով, յեթե հենվելու լինենք վերը հիշած ժուրնալի տված տեղեկություններին, Քութայիսում գոյություն են ունեցել չափից զուրս թույլ միություններ: Նույն ժուրնալի տված տեղեկության համաձայն, բաթումի շարժումը ևս թույլ և յեղել, ինչպես և Քութայիսինը: Քաղաքում այսոր գոյություն ունի 8 միություն: Ամենից մեծ միությունն ունի 140 անդամ: Մի ամիս առաջ հիմնվեց կենտրոնական բյուրո «կենտրոնական խորհուրդ» անունով:

«Ճիշտուրայում առաջներում գոյություն ունեցող թույլ միություններն այժմ բոլորովին գոյություն չունեն: Գործակատարների արհմիությունը հիմնվեց, բայց փորձված զեկավարի բացակայության պատճառով զարգարեց»:

Փոթիում գոյություն ունի միություն, վորը միացնում և բոլոր արհեստաների անդամներին:

Թելավում և Սղնախում գոյություն ունեն յերկուական միություններ, վորոնք բոլորն ել նոր ևն և չափից զուրս թույլ:

Ինչպես յերկում ե զեկավարություններից, արհեստական շարժումը մեզանում, բացի թիֆլիսից, շատ թույլ և^{**}): Այսպիսով արհեստական շարժման կեն-

^{*)} Տես ժողով. „Պրօֆէս. վեստնիք“ համ. Ռուսաստանի արհմուրծություն որդպան:

^{**)} Տես ժողով. „Պրօֆ. վեստնիք“ 1907 թ. 26/X № 15 ր. Պետերբուրգ.

արօնը 1905—07 թ. համեմատաբար ուժիկ եր Թիֆլիսում, Այս կենտրոնը աշխատում եր ել ավելի ամրացնել արհմիությունները, բայց նրան խանգարում եր այն, վոր նա չեր վերցրել դասակարգային ամուր դիմ: Ճեղա ե, բայց ներկայի մատնացույց եյին անում այդ զծի մասին, բայց մնում եր առանց ուշադրության: Մինչև այդ, հասավ ժամանակը ա/կ արհմիությունների կենտրոնական բյուրոների ներկայացուցիչների խորհրդի կազմելը, վորը կայացավ Թիֆլիսում սեպտեմբերի 11-ին *):

Այս խորհրդակցության հաշվետվության մեջ կարդում ենք. — «Խորհրդակցությանը մասնակցեցին կենտրոնական բյուրոների ներկայացուցիչները հետեւյալ քաղաքներից. — Բաթումից — 1. Քութայիսից — 2. Ճիաթուրիայից մասնակցեց պատահաբար Թիֆլիս յեկած մի բանվոր, վոր աշխատում եր այնտեղի արհմիություններում: Խորհրդակցությանը բոլորը մասնակցում եյին 5 վճռողական ձայնով, իսկ 2 խորհրդակցական ձայնով: Նախագահի ընտրությունից հետո **) կազմվեց հետեւյալ որակաբարգը».

1. Զեկուցումներ տեղերից:
2. Համ. Ռուսաստանի բոլշևիկների համագումարը:
3. Անզրկովկասյան համագումարը:
4. Արհեստ. միությունների գրական որդանը:

Առաջին հարցի մասին զեկուցումներ արին Թիֆլիսի, Բութայիսի, Բաթումի և Ճիաթուրիայի կենտրոնական բյուրոների ներկայացուցիչները:

*) Տես Անդրկովկա քաղաքների կենտր. բյուրոների ներկայացուցիչների խորհրդի հաշիվը ի. Բ-ձեյի, ժուրնալ «Ախալքաղականա» № 14 1907 թ.

**) Նախագահի ով լինելը հայտնի չեն

Թիֆլիսի արհեստական միությունների միացման վերաբերյալ զեկուցանողն ասում ե. «Թիֆլիսի արհմիությունների գոյությունն սկսվում է 1905 թ. հոկտեմբերյան «ազատ որերից»: Հոկտեմբերյան որերին հետեւղ դաժան ռեակցիան սկզբում արգելք հանդիսացավ այս նորակազմ շարժմանը, բայց վերջնականապես վոչչացնել չը կարողացավ և կարծ ժամանակից հետո միությունները նորից սկսում են կենտրոնական ու կազմակերպորեն ամրապնդվել: Մի քանի ամիսների ընթացքում միություններն այնքան ուժեղացան, վոր կարողացան հիմնել կենտրոնական բյուրո, վորի անունն այն ժամանակ զրվեց «արհեստական» միությունների բանվորական դեպուտատների կենտրոնական խորհուրդ»: Սա տեղի ունեցավ 1906 թ. նոյեմբերին: Արհեստ. միությունները Թիֆլիսում աստիճանաբար զարգանում են և կանգնում բազմաթիվ կարևոր ինքնիրների առաջ... Այս հանգամանքը ցանկություն առաջ բերեց 1907 թ. մայիսին Թիֆլիսում զումարել արհմիությունների առաջին կոնֆերենցիան:

«Թիֆլիսում այսոր զոյություն ունի 34 միությունն, վորոնցից ՅՅ-ը մտնում են կենտրոնական բյուրոյի մեջ: Միության դրամարկղի զրությունը և անդամների քանակը պարզված չե: Յեթե նկատի առնենք միությունների անդամների այն քանակը, վոր պարզվեց Թիֆլիսի առաջին կոնֆերենցիայում, անդամների թիվը պետք ե մոտավորապես լինել 8—9 հազար»: Թիֆլիսի բոլոր միաւթյունները զիմավորապես կանգնած են զասակարգային հողի վրա (Բ. Մ) և նրանց կոչումը զիմավորապես կապիտալիստների դեմ անտեսական կոիվ մղելն է *):

*) Տես ա/կ քաղաքների կենտր. բյուրոների ներկայացուցիչների խորհրդական հաշիվը «Ախալքաղականա» № 14, 1907 թ. սեպտեմբերի ի. Բ-ձեյի նորվածը

Զեկուցողն այսպես եր նկարագրում թիֆլիսի արհմիությունների դրությունը: Զեկուցման մեջ անշուշտ կան անձառություններ, բայց թե ինչպիսի դրության մեջ եյին զանվում արհմիությունները, այդ մասին վորոշ պարզաբանություններ կային: Զեկուցողի ասելով «Թիֆլիսի արհմիությունները կանգնած եյին դասակարգային հողի վրա»: Այս բանը ճիշտ չեր: Նըրանցից շատերը, յերբ գտնվում եյին համաձայնողականների զեկավարության տակ, ողային աշխատանքներ եյին կատարում հակառակ այն բանի, վոր բոլշևիկ բանվորները ամեն քայլափոխում ժամացույց եյին անում նրանց այս մասին:

Այս խորհրդակցության ժամանակ ինչպես ե, բնորոշում Քութայիսի կենտր. բյուրոյի ներկայացուցիչը Քութայիսի արհեստ շարժումը:

«Քութայի արհեստ, շարժումը... բոլորովին նոր ե վոտքի կանգնել. միայն յերկու միություն ունեն մի քանի ամսվա պատմություն: Մնացածները հիմնված են գերջին 1—1½ ամիսների ընթացքում: Մի քանի ժիություններ, ինչպիսիք են որինակ, խարազների, կողմանականների, կարանողների և «ստալյարներինց», նորեն միայն կազմակերպվում: Քութայիսում կազմակերպված ձևով գործի անցած միությունների թիվը ընդամենը համառում ե վեցի, վորոնց մեջ մանում են 423 միացված բանվոր: Զը նայելով միությունների թույլ լինելուն, Քութայիսում հիմնվեց կենտրոնական բյուրո, վորի ուղղակի պարտականությունն ե զարկ տալ նոր հիմնված արհմիությունների շարժմանը*)

Այս տեղեկությունից պարզ յերևում ե, թե վոր աստիճան թույլ են Քութայիսի արհմիությունները:

*) Տես նույնը:

Զեր կարելի այստեղ հիմնել զորեղ միություններ, վորովհետև Քութայիսի շրջանում շատ տվելի թույլ եր զարգացած արդյունաբերությունը և այդ պատճառով անկարելի յեր զորեղ արհմիություն հիմնելը: Քութայիսի համեմատությամբ Բաթումում ավելի թույլ եր արհմիության շարժումը, չը նայելով այն հանգամանքին, վոր այստեղ ավելի նպաստավոր պայմաններ կային: Բաթումի կենտրոնական բյուրոյի ներկայացուցիչը խորհրդակցության ժամանակ հայտնեց — «Բաթումի արհմիութենական շարժումը ավելի թույլ ե, քան Քութայիսինը չը նայելով վոր Բաթումում ավելի լավ պայմաններ կան դրա համար: Բաթումում պրոֆշարժումը այս տարի սկսվեց, իսկ զործակատարների միությունը հիմնած ե անցյալ տարվանից: Ընդամենը գոյություն ունի ութ միություն: Ամենից ավելի անդամներ ունի տնային ծառայողների միությունը (140 անդամ): Մի քանի շաբաթ սրանից առաջ հիմնել են միությունների կենտրոնական բյուրո:»

Բաթումի պրոֆշարժման այսպիսի հետամնացությունը պետք ե վերագրել այն բանին, վոր այստեղ գոյություն ունեցող ամենից ուժեղ հիմնարկությունները — Ռողշիլդ-Մանթաշկի զործարանները փակվեցին: Մանր արտազրություններում մեծ մասամբ աշխատում եյին տաճիկ և հայ անգիտակից բանվորները: Հասկանալի յե ինքն ըստ ինքյան, վոր արհմիություններում այդպիսիներին կազմակերպելը չափից դուրս գգվարին խնդիր եր:

Վոչ ել ձիաթուրում ե գործը կարգին դրված: «Պրոֆշարժումը ձիաթուրում միանգամայն մարված եր: Անցյալ տարվանից գոյություն ունեցող գործակատարների միությունը վոչչության մատնվեց դե-

կավար չունենալու պատճառով։ Պրոֆմիությունների գոյության համար պատրաստի հող, խոկ բանվորների մեջ ձգում կա, բայց բացտկայում ե— փորձված կազմակերպող և ղեկավար։ Ահա այսպես եր բնութագում տեղական պրոֆմիություններին ձիաթուրիայի բանվորների ներկայացուցիչը։ Բացի դրանից, Անդրկովկասյան քաղաքների պրոֆմիությունների կենտրոնական բյուրոների ներկայացուցիչները քննության առան համ, Ռուսաստանի պրոֆմիությունների համագումարին մասնակցելու խնդիրը և վորոշեցին վորպեսքի բոլոր կազմակերպություններն ել մասնակցեն համագումարին։

Նվատակահարմար համարվեց Ռուսաստանի համագումարից հետո հրավիրել Անդրկովկասյան պրոֆմիությունների համագումար։

Դերջում վորոշվեց, վոր համ, Ռուսաստանի պրոֆմիությունների համագումարը հրավիրող հանձնաժողովի հետ սերտ կապ հաստատելու նպատակով կենտր. բյուրոննը անմիջական կապ պահպաննեն Ռուսաստանի միությունների գումարող կազմակերպչական հանձնաժողովի հետ։

Այս խորհրդակցությունն իր անհասկանալի վորոշումների շնորհիվ բանվոր դասակարգի մեջ սերտ կապ հաստատելու և դասակարգային վորոշակի դժի վրա կանգնեցնելու տեսակետից շատ քիչ բան և արել սակայն չի կարելի անուշադրության մատնել նրա ունեցած վորոշ նշանակությունը։ Ա/կ արհմիությունները խորհրդակցության ժամանակ մեկ-մեկու չեցին ձանացում և գործում եյին իրարից անջատ։ Խորհրդակցությունը դարձավ կազմակերպչական ամբողջացման այն որդանը, վորին ձգում եր ամեն անկեղծ պրոֆաշնատող։

Ինչպես ասված ե վերևում, ա/կ քաղաքների արհմիությունների կենտր. բյուրոնների ղեկադատների խորհրդակցության նպատակն եր պարզել պրոֆաշնատագործյան ուժերը և հող պատրաստել համ, Ռուսաստանի համագումարի համար։

Սկ ռեակցիայի շնորհիվ չկայացավ համ, Ռուսաստանի արհմիությունների համագումարը, վոր նշանակված եր 1907 թ. ոգոսատուխն *): Այդ թվականին ցրվեց պետական գումարն ևս Բանվորական պրոֆմիությունների ղեկավարներին ռեակցիան զրկեց հիշված համագումարը հրավիրելու հնարավորությունից։

Այս պատճառով ա/կ և մասնավորապես Վրաստանի արհմիությունները ևս ստիպված յեղան ուժեղ կարվ մղել ռեակցիայի դեմ։ Բանատարկության և աքսորի յենթարկվեցին պրոֆաշնատավորներից շատ շատերը։

Ղեկավարներին աքսորի յենթարկելու պատճառով, արհմիություններից շատերը դադարեցրին իրենց գոյությունը։ Խոկ մի վորոշ մասը ստիպված յեղավանեկալ գործունեյության անցնելու։ Այս վերջինները ևս զադարեցին գործելու նրանց դեմ ձեռք առնված բեկորների միջնորդների պատճառով։ Մինչև փետրվարյան հեղափոխությունը համարյա վոչ մի միություն չը կարողացավ պահպանել իր գոյությունը։

Այսպիսով, արհմեստակցական կազմակերպությունները, վորոնց հեղափոխությունը հնարավորություն ովեց գործելու, պարտվեցին հեղափոխության հետ միասին։

*) Պետք ե նշել, վոր ա/կ արհմիությունների ղեկավարներն ուշացրին նախապատրաստական խորհրդակցություն հրավիրելու բ. Մ.

Այստեղ կուզեյի մի քանի խոսք ասել այն մահն, թե վզրպիսի հարաբերություն դոյություն ուներ կուսակցությունների և արհմիությունների միջև: Ճիշտ է, վերևում շոշափել եմ այս խնդիրը, բայց հետաքրքրությունից զուրկ չի լինի, յեթե այստեղ այդ հարցի մասին խոսեմ ավելի ընդարձակորեն:

Վրաստանում, սոց. գեմոկր. կուսակցությունը, իր հիմնադրության որից սկսած, կրիվ եր մղում վորպեսզի իր աղդեցության տակ առնի արհմիությունները և բանվոր-ծառայողների ուրիշ ընկերություններ — ինչպիսիք են. — բանվորական ակումբները, գրադարաններ, փոխադարձ ոգնության, թաղման գանձարկոներ, կոռուպերատիվ հիմնարկություններ և այլն: Այս կուսակցությունից զատ, կային նացիոնալիստական հովերով տարված կուսակցություններ են, վորոնց թշվում ամենից ավելի յեռանդությունը — զաշնակցականների կուսակցությունը: Այս կուսակցություններն աշխատում եյին ազգային արհմիություններ ու «ազգերի ազատության լողունգի տակ» կազմակերպ եյին բանվոր-ծառայողներին: Դաշնակները գրավեցին կար անող բանվորության փոքր մասի համակրանքը և հիմնեցին «կար անող բանվորների դաշնակցական արհմիություն» *):

Դաշնակցականները սրանով չը բավականացան և սկսեցին վոչ դաշնակցական արհմիությունների գեմ տարածել անլուր բամբասանքներ: Նրանք գրում եյին, վոր իբր թե վոչ ազգային (անկուսակցական) արհմիությունը պատկանում է վրացի բանվորներին միայն,

*) Տես Ն. Խորիելի Վրաստաճի կար անող բանվորների համառոտ պատմությունը (1860—1929 թ. յերես 26), Վրաստաճի պրոֆեսորների պատմ. բաժնի հրատարակչություն:

և վորպես թե վրացի բանվորները հայ բանվորներին մատնում եյին վոստակնության ձեռքը և այլն *):

Նման միջոցների նպատակն այն եր իհարկի, վոր հայ բանվորներին հեռացնեյին արհմիություններից ու կազմակերպեյին իրենց կուսակցության դրոշակի տակ: Բայց նրանց այդ չը աջողվեց և հայ բանվորության մեծ մասը գտնվում եր սոց. գեմոկրատ բանվ. կուսակցության ազդեցության տակ:

Սակայն այս կուսակցության մեջ ևս շուտով առաջ յեկան պանազան տեսակետներ արհմիությունների վերաբերյալ ինչպես հայտնի յե կուսակցությունը բաժանվեց, յերկու գրակցիայի: Յեզ արհմիությունների վերաբերյալ նրանց տեսակետները ևս տարբեր եյին:

Այս պատճառով արհմիությունների վերաբերյալ հարցը զրվեց 1906 թ. Ստոկհոլմում կայացած կուսակցական համագումարում:

Բոլշևիկները և մենշևիկները ներկայացրին ամեն մեկն իր բեզոլյուցիան: Համագումարն ընդունեց մենշևիկների բանաձեր բոլշևիկների մտցրած փոփոխությունով:

Բոլշևիկներն այս համագումարում պնդում եյին, վոր «պրոլետարիատի անտեսական պայքարը կարող է լավացանել մասսաների դրությունը և ամրացնել դառնակարգային պրոլետարիատի՝ կազմակերպությունը միայն այն դեպքում, յեթե նա միացված կը լինի քաղաքական պայքարին: Կուսակցությունը ամամառների պատմությունը անհրաժեշտ է համարում, վոր կուսակցությունը մատնեն միության և համարում, վոր կուսակցությունը մատնեն միության մեջ:

*) Տես 1905 թ. դաշնակ. լուսակի «Ժամանակի» № 57-ը.

շարքերը և կուսակցությանը կից հիմնեն միություններք*):

Ստոկհոլմի համագումարի ընդունած բանաձեռնակային, բոլեկիկների և մենշևիկների միջև արհմիությունների վերաբերյալ գոյություն ունեցող անհամաձայնություններին չը կարողացավ վերջ տալ: Վիճականությունը այդ հոդի վրա ելի շարունակվեց և հարցը նորից զրվեց և ոնդոնի համագումարում 1907 թ. վորհն ընդունեց բոլեկիկների առաջարկը:

Եռնդոնի համագումարն ընդունում է, վոր ինչպիս կուսակցական կազմակերպությունների, այնպիս և առանձին ամեն մի կուսակցականի հիմնական նպատակը պետք է կազմի ձեռք առնելու ամեն միջոց, վոր միությունները ճանաչեն կուսակցության դադարական ղեկավարությունն ու միությունների միջև հիմնվի հաստատուն հարաբերություն»**)։

Այս վորոշման դիմ դուրս յեկան մենշևիկները՝ նրանք սկաշտանում եյին անկուսակցական արհմիություններ ու սրանով ուզում եյին իրենց ազգեցության տոկ առնել թե անկուսակցական և թե մենշևիկ քանվորներին: Այս պայքարը վրաստանում շարունակվեց արհմիությունների գոյության ընթացքում: Միությունների մի մասը հարում եր բոլեկիկներին, մյուս մասը մենշևիկներին: Ինչպես վերև հիշեցինք, սկզբնա-

*) Տես Միլնով. «Արհմատ. շարժումը առաջ և հիմա» յերես 26 վրացերեն հրատարակություն:

**) Ուշից միություններ ևս գտնվում եյին բոլեկիկ կազմակերպության ազգեցության տակ առաջման ձեռնապահ ենք մնում նրանց անունը հիշելուց, վորովհետեւ այս հարցը վերջնականապես գեռ սպարզված չեւ:

կան շրջանում համարյա բոլոր վոչ լեզար միությունները գտնվում եյին բոլեկիկների ձեռքում:

Վերջում մենշևիկները վրաստանում սկսեցին կոփ մղել այն միությունների զեմ, վորոնք գտնվում եյին բոլեկիկների ազգեցության տակ Բոլեկիկները կարողացան իրենց կողմը պահել ույժը: Նրանց ազգեցության տակ մնաց ծառայողների միությունը և նրա որպան «Ախտի զրոհերան» **):

**) Տես Կույժի յերես 26:

ՀԱՎԵԼՎԱԾ

(ԱՅՍՏԵՂ ԱՌԱԶ ԲԵՐՎԱԾ ԹՐՈՒ-
ՑԻԿՆԵՐԸ (ՊՐՈԿԼԱՄԱՑԻԱՆԵՐԸ)
ՊԱՀՎՈՒՄ ԵՆ ՎՐԱՏԱՆԻ ՀԵՂԱ-
ՓՈԽՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ
(ՄՈՒԶԵՈՒՄՈՒՄ)։

ԿՈՎԿԱՍՅԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՈՑ. ԴԵ-
ՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ.

ԹԻՖԼԻՍԻ ԸԵՐԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԱԲՀԵՍՏԵՆՈՅԻ ԲԵՆԳՈՐՆԵՐԻՆ

ԸՆԿԵՐՆԵՐ.

Քաղաքական և տնտեսական շատ նեղ դրության
մեջ և գտնվում Բուռաստանի բանվոր ժողովուրդը՝
Զուրկ եւ մարդկային տարրական իրավունքից, խոսքի,
մամուլի, ժողովի և զործադուլի ազատությունից. թեև
հեռացված քաղաքական կյանքից, նաև ստիպված է
դժոխային պայմանների մեջ կոխվ մեկ կապիտալիստ-
ների անխիղճ շահազործումների դեմ. Բայց հաղարա-
վոր շղթաներով կապված, նեղված ամենքից և ամեն
տեղ, զուրկ կովկեռու զենքից և նք այնուամենայիվ
կովում եյինք ու լավացնում մեր դրությունը Հայ-
տարարում եյինք գործադուլներ թեև այս գործադուլ-
ներն արգելված եյին, — պահանջում եյինք աշխատանքի
որվա կրծատումն, աշխատավարձի ավելացում թեև սրա
համար բանտարկում եյին մեզ ու խում մեզանից մեր
լավագույն ընկերներին. Դեռ 1896 թ. Պետերբուրգի մեր
ընկերները հայտարարեցին ամենալայն գործադուլ

վորի հետևանքը յեղավ հունիսի յերկուսին հրատարակված որենքը։ Սարսափահար յեղած կառավարությունը և բուրժուազիան ստիպված յեղան զիջել բանվորներին—սահմանել 10 ժամ՝ աշխատանքի որ։ Սրանով մենք հնարավորություն ունեցանք ազատվելու անամսական կյանքից։ Մենք ևս շատ անգամներ գործադրու ենք արել և պահանջել աշխատանքի որվա կը բառում և այլն ու մեր նյութական զրությունը լավացնող պայմաններ։ Սրանով ուզում եյինք վոր մեջք կոտրող աշխատանքից հետո մի քիչ ժամանակ ճարինք մտավոր զարգացման և մեր դասակարգային շահերի ուսումնասիրության համար։ Նյութական զրությունը լավացնելու համար մզգող պայքարում արևմտյան Յեղորդությի մեր ընկերները խոշոր ուշադրություն եյին դարձնում և այսոր ել դարձնում են աշխատանքի որվա կրծատմանը։ Դեռ 1889 թ. համաշխարհային սոցիալիստական համագումարը Փարիզում վորոշեց, վոր բոլոր յերկրների սոց. գեմոկրատներն աշխատեն առաջիկա մախին կազմակերպել միտինգներ ու ցույցեր և փրապես զիսավոր պահանջներից մեկը զնել բուրժուական կառավարության առաջ և պահանջել 8 ժամյա բանվորական որ։

Յեկի իսկապես այլպես ել յեղավ, հետևյալ տարվա մայիսի մեկին վոտքի կանգնեց ամբողջ արեմտյան Յեղորդությի պրոլետարիատը, պաշտպանեց կոնգրեսի վորոշումն ու այսպիսով դասակարգային իր զիտակցությունը։ Այստեղից պարզ յերկում ե, թե վորպիսի նշանակություն պետք է ունենա մեկ համար աշխատանքի որվա կրծատելը։ Յեղորդությի պրոլետարիատը սակայն ողուժում և քաղաքական ազատությունից, որ համար արգելված չե միտինգներ սարքելը, գոր-

ազգուներ հայտարարելը և իր կարծիքն ու ահսակեալող ազատորեն հայտնելը։ Եա հնարավորություն ունի պահանջ զնել կառավարության առաջ և ստիպել նրան աշխատանքի պաշտպանության որենք հրատարակելու։ Մենք, մուսասամանի բանվորներս զուբկ ենք այս բոլորից։ Այս աննշան բարեկալվությունը, վոր կարողացանք ձեռք բերել կապիտալիստներից—ուժով, ու մեղանից խլված զոների գնով, մեր անկուշու խազեյինները զանգան ոյինբազություններ սարքելով վոչընչության են յենթարկում։ Կապիտալիստների յերկերսությունն ու բռնադատությունները չեն ճանաչում և վոչ մի սահման։ Որենքով, այսինքն թղթի վրա հաստատված և 10 ժամյա աշխատանքի որ։ Սակայն իրականության մեջ խազեյինները մեղ աշխատեցնում են 13—15 ժամ որ ու գիշերվա մեջ. գոյություն ունի մի մեջոց վորով խազեյինները յերկարացնում են աշխատանքի որը և վատթարացնում մեր տնտեսական զրությունը, որ հավելյալ ժամերն են, կամ յերեկոյան աշխատանքը։ Յեկ բավական ժամանակից ի վեր կատարում ենք մեր խազեյինների հրամանը և սովորականից ավելի աշխատում 3—4 և ավելի ժամեր։ Արհեստանոցի թունավոր մթնոլորտում աշխատում ենք 12—14 ժամ։ Աշխատում ենք առանց գլուխ բարձրացնելու թկան անասունի նման։ Մի բանվոր աշխատում և յերկուսի փոխարեն։ Բազմապատկում և զործագությունների թիվը։ Հազարներով և տասը հազարներով մի կտոր հաց ճարիկու համար ձեռքները պարզաց շրջում են փողոցից-փողոց, խազեյինները պահանջնում են մեր աշխատավարձը, ել ավելի յերկարացնում աշխատանքի որը, վորի հետեւնքով ազատ ժամանակ չենք գտնում գիրք ու լրացիր կարդալու, հնար չու-

նենք ժողովներ զումարելու, փոխտղարձ կարծիքներ հայոնելու կամ մեր նեղ դրության մասին խորհրդակցելու: Այսպիսի միապաղաղ կյանքով են անցնում մեր որերը: Միայն մուրճերի ծանր հարվածներն ու մեքենաների շրիկ-թրըթկոցներն են կարողանում իրացնել մեր լսողությունը: Սակայն բավական է կենդանիների նման ապրելը: Մենք ուզում ենք լուսավորություն, մեղ ել հարկավոր և առողջություն, մեղ համար և թանգ և ապրելը—կյանքը:

Ըսկերներ, մենք կոչ ենք անում բոլոր գիտակից բանվորներին յեռանդով պաշտպանել մեր բոլոր վորոշումները, ել չաշխատենք յերեկոները: Հերիք ե, վորքան խարեցին մեր տերերը, Քիչ աշխատենք արհետանոցի թունավոր մթնոլորտում, ավելի ազատ ժամանակ նվիրենք մեր շահերի գիտակցության և համերաշխության հաստատման գործին: Համաձայնության գանք մեկը մյուսի հետ և բոլոր միասին վերացնենք յերեկոյան աշխատանքը:

Թող վերանա մեր միջից ամեն մի յերկառակություն: Մենք ուրիշ թշնամիներ շատ ունենք, բանվորը չի կարող լինել բանվորի թշնամին: Յեվ յեթե բոլորս միասին ուզենանք, դյուրությամբ կարող կը լինենք կատարել այս բոլորը:

Կեցցեն ուրեմն մեր կոփը, բանվորության միջն համերաշխությունը:

Կորչին կապիտալիստները:

Թիֆլիսի կոմիտետի տպարան:

Թիֆլիսի կոմիտետի տպարան:

Պրոլետարիատ բոլոր յերկրների, միացե՛ք!

ՈՌԽԱՍՏԱՆԻ ՍՈՅ. ԴԵՄՈԿՐԱՏ ԲԱՆՎՈՐ. ԿՈԽՍԱԿ. ԿՈՎԿԱՑՅԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ.

ԺԱՌԹԱՆԻՐԱՅԻ ՄԱՐԴԱՅՆԵՑԻ ԲԵՆՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՀԱՆՁԱՅ:

Յերկար ժամանակ ե, ինչ մենք Ճիաթուրայի մարգանեցի բանվորներա խոնավ ու մութ, ճրագների հոտով լցված հանքահորելում 16—17 ժամվա ընթացքում տանում ելինք դժոխային անտանելի ու տանջապաշխատանքի:

Նույն պայմանների մեջ են գտնվում և մեր յեղբայրակից չարվագարները, վագոն բարձողները և մարդանեցի մյուս աշխատավորները Մենք վազուց ենք զգում այս անտանելի հոգեկան դրությունը, շատ վազուց զգում ելինք այդ, բայց վարովհան մեր մեջ պակասում եր միությունը և գիտակցությունը, մենք չենք վատահանում հրապարակ հանել մեր այդ զգացմունքները, վախճանում ելինք մեկը մյուսին դավաճանելուց, այդ պատճառով ել յերկար ժամանակ լուս ելինք ձեռքներս կը քերի սարսած:

Բարեբաղդաբար ամեն ինչ ունեցել և իր սահմանը: Բազգում, Թիֆլիսում, Միֆայլովում, Շորապանում և Ղվիրիլիայում պատահած դեպքերը հենց մեր

ընկերների հերոսական և միաձույլ զործունեությունը
հուլիսի 17-ին մեզ ևս հավաքեց մի տեղ ու միացրեց,
մի հոգի մացրեց բոլորիս մեջ ու մեզ ևս արշավեցրեց
մեզ առաջող—թալանողների գիմ:

Ամենից շատ մեզ եւ զրդովմունք ու զզվանք պատ-
ճառում այս զործում կառավարության լրբարար խառ-
նըլելը: Նահանգապետ Մամպինը իր զորքերով հպար-
տորեն բարեհաճնեց մեզ մոտ, յերեխ կարծում եր վա-
խեցնել մեզ անցյալի նման ճորտորեն ներեղություն
խնդրել տալ և ստիպել մեզ հետ վերցնել մեր բոլոր
պահանջները: Բայց վճչ: Հերեք եր այսքան լուռթյունը:
զազանացած կառավարությունը չի կարող մեզ վա-
խեցնել իր ավենակը հրացաններով, վորոնցով Մի-
իայլովոյում թափեց մեր ընկերների արյունը. չի կա-
րող վախեցնել այս անամոթ կառավարությունը, և
դրա համար մենք, բանվորներս վորոշեցինք միանալ
մեր գիտակից, այսոր գործադուլ հայտարարած ընկեր-
ներին Կովկասում, վորպեսզի միացած ույժերով գրոհ
տանք, սարսափի մեջ ձգենք մեզ թալանողներին և
կառավարությանը ու այսորվա մեր ծայրահեղ դրու-
թյունը լավացնելու համար պահանջնենք հետեյալը:

1. Բոլոր հիմնարկություններում ել սահմանելութ
ժամանական որ (8 ժամ):

2. 18 տարեկանից ցածր հասակ ունեցողներին
արգելել մարգանեցի հանքերում աշխատելու:

3. Վերացնել ամեն մի «սկիբկա» և քաշը լրիվ
կերպով գրել հաշվեգրքում ու մուծել զրվանքաներն
անդամ:

4. Հիմնովին վերացնել նարդի (կապալ) կոչված
աշխատանքը և փոխարկեն սահմանել որվա աշխատանը:

5. Որտեղ աշխատավարձը ամենաքիչը (մինի-

մում) չը պետք եւ լինի պակաս, քան ներքեւ առաջ բեր-
ված թվերը.

ա) հանքարողական կարողների համար 2 մանեթ. բ) գուրս կրողներին 1—50, գ) զուրս աշխատաղներին 1 ման.
դ) բարձողներին 2 ման. կամ ամեն մի ծածկված վա-
գոն բարձելուն 2. ման., բաց վագոնը 1—20 կ., իսկ
տաշկայով բարձելիս 1—50 կոպ. յե) հանքերից մի
փութ քար գուրս բերելու վարձը 2 կոպեկից պակաս
չը պետք եւ լինի:

6. Տոն որերի աշխատանքը պետք եւ հաշվել մեկ
որը որ ու կես,—հավելյալ աշխատանքի մի ժամը հաշ-
վել մեկ ու կես ժամ:

7. Հանքերում կառուցել առողջության ոլահանջի
բնակարաններ եժանագին ճաշարաններով, ընթերցա-
րանով և շաբաթական դպրոցով: Բնակարանների թիվը
պետք եւ համապատասխանե պահանջին — կարողանա
տեղավորել բոլոր բանվորներին:

8. Կառուցել թավլաներ և առողջապահական բնա-
կարաններ չարվադրաների համար:

9. Աշխատանքի համար պահանջվելիք գործիք-
ները, այլ և զրանց վերանորոգումը ձեռք երերզում
և կատարվում վարձողների հաշվին:

10. Կառավարության կողմից լուրջ ուշադրու-
թյուն տոննելներն ամրացնելու գործի վրա:

11. Տոննելները լուսավորել լավագույն լամպա-
ներով վորպեսզի ճրագների ծխով չապականվի տոննել-
ների առանց այն ել թունավորված մթնոլորտը:

12. Տալ մարգանեցի բոլոր բանվորներին գլխարկ-
ներ, հագնելիք և վոտնամաններ:

13. Աշխատավարձը վճարել շաբաթ որերը աշ-
խատանքի ժամանակ, վոչ ուշ, քան յերեկոյան: Ժամը 5-ը:

ԳՈՐԾԱԴՐՈՒԱՎՈՐՆԵՐԻՆ *

14. Ապահովագրել բոլոր բանվորներին և չաղաքներին:

15. Հանքերից վոչ հեռու բերել խմելու, աղբյուրի մաքուր ջուր:

16. Վերացնել բանվորներից բաղանիքից ոսկովելու համար վճար վերցնելը և մի բաղանիք ել հիմնել ձիաթուրում:

17. Խիստ ուշադրություն դարձնել հիվանդանոցի վրա և պաշտոնից հեռացնել վորափս անհամապատասխանների, բոլոր կոպիտ վարչողներին հիվանդանոցում:

18. Էռուջ ուշադրություն դարձնել բաղանիքների վրա ևս, փորձեսպի ժամանակին բացվի ու ունենալ թետաք և թե սառը ջրեր ամեն մեկն իր տեղը:

19. Հատկապես ծիսթուրայի շրջանում նշանակվի գործարանային ինսպեկտոր:

Ուրիշն առանց իրար դավաճանելու ամուր կանգնենք մեր պահանջների վրա: Թող վոչ վոք մեղանից չը վախենա զգվելի ինքնակալության ներկայացուցիչ նահանգապետ Սարգիսից:

Զգացնել տանք նրան վոր մենք ել մարդ ենք և մեր մյուս ընկերների հետ միասին պահանջում ենք մարդկային պատիվ և իրավունքներ:

Կորչեն արյուն խող կապիտալիստները:

Կորչի նրանց և իր գաղանային որենքների պաշտպան ինքնակալ ցարը:

Կեցցե մեր միությունը, մարդկային պատությունը:

Կեցցե սոցիալիզմը և ապագա գեմոկրատական հանրապետությունը:

Իմերեթիայի սոց. դեմոկր. բանվ. կոմտիտես:

Սոց. դեմոկր. տպարան:

Ընկերներ, արդեն 2 շաբաթ ե, վոր մենք գործադու ենք արել, վորը սարսափ և ազգել խազեյիններին: Յերկու շաբաթ և անցնում, ինչ քայլ առ քայլ առաջ յեն զալիս վաստիկանության և խազեյինների միացած ույժերը: Ել ինչ ույժեր ասես, գործ չը զբին մեզ կոտրելու համար.— սպասնալիք մարակով, բանասով, սպիններով, գնդակով և աքսումի: Ազգային թունավորում, պրովակացիաներ, ծիաթուրիայում ապրելու արգելք և այլ նստան միջոցներ: Բայց իզուր, մեր գործադուն այսու ևս նույնպես ամուր և ու անշեղ, ինչպիս և առաջին որն եր: Միանգամայն իզուր անցան խազեյինների արած փորձերը, վոր անում ելին նրանք թուրքերին, հայերին և նույներին մոլորդցնելու մտքով:

Եզուր անցան նրանց վտխեցնելու նպատակով վաստիկանության արած փորձերը և ամուրացնայի հույսը զարմանալի ամրություն ցույց տվին բանվորական համերաշխության գործում: Երանք անսովոր առկունությամբ դիմացան այդ բռլորին, ծիաթուրայից աքսորվելուն ել համաձայնվեցան, բայց չը սկսեցին աշխատելը: Այսպիս վարվեցին վոչ միայն գործադու արածները, այլ հեռավոր տեղերից յեկածներն ես. Բաթումից խաբեռությունով բերած հայերն ու թուրքերը հենց վոր իմացան, վոր նրանց բերել յեն գործադու արածների փոխարին աշխատեցնելու, յեղադադու արածների գործադու արածների հետ, բայց արածային համբուրվեցին գործադու արածների հետ, բայց արածային ցանկացան նրանց աջողություն և վե-

*) Այս թատրոնը հրատարակել և ծիաթուրայի հանքերի բանվորների գործադուկային բյուրոն:

բագարձան իրանց տեղիրը: Այս բոլորը խախուտաց-
քեց խազեցինների ամրության հիմքը հնրանք սկսեցին
բռնել զիջողության ճանապարհ... Սակայն սև բծեր
լուսնյակի վրայից ել անսպակասեն. հատ ու կենա
հուդաները մեր մեջ ել գտնվեցին, և գտնվեցին այն-
տեղ, վորտեղ ավելի քիչ եյինք սպասում—վրացի բան-
վորների մեջ: Դավաճանների թիվը տասնի յեր հա-
նում: Նրանք աշխատումեն Բգան գյուղի պերսենակի
արգյունաբերության մեջ: Նրանք աշխատում են զին-
ված պահակների պաշտպանության տակ: Ընկերների
իրատներին նրանք նշանակություն չեւ տվին, յերևի
պերսենակի վոսկինները բոլորովին խավարեցրին նրանց
հոգին ու վաճառեցին իրենց ընկերների շահերը: Նը-
րանց ազգ ու անունները մենք հայտնում ենք գոր-
ծադուլ արածներին և նրանց գատը տալի ժողովրդի
ձեռքը: Թող նրանք արժանանան բանվորների զըդ-
վանքին: Սրանով մենք չենք բավականանա, նրանց
վարմունքի մասին հայտնեցինք իրենց գյուղերին ևս
թող նրանց բարեկամներն ու հարևանները ևս դատեն
նրանց ամեն տեղ զզվանքի արժանացնեն, հաստատեն:
Տալիս ենք նրանցից յերկուսի ազգ՝ անունը. Վլաղիմեր
Թողաձեւ և Պարմեն Մարգվելաշվիլի: Մնացողների ա-
նունները կը հայտնենք հետագայում:

Այս մի քանի զավաճանների վերաբերյալ գոր-
ծադուլային բյուրոն կոչ եւ անում բոլոր ընկերներին
ցույց տալ ել ազիլի լուրջ վերաբերմունք. — խազե-
ցինները քնած չեն, նրանք վորոնում են այնպիսի
ստոր հոգինների, վորոնց կաշառելը հեշտ և նրանց հա-
մար: Հետևապես մենք ևս չեւ պետք եւ քընենք, վորո-
պեսզի մեր հոգիկան ամրությունով վարակինք ցած-
րահոգիններին: Թող բոլոր գիտակից բանվորները հըս-

կողություն ունենան ինչպես թույլ ընկերների վրա,
նույնպես և թողած աշխատանքների: Թող նրանք
գործադուների մեջ տարածեն հոգու ամրություն և
ժամանակին տեղեկացնեն թե անցնող-եկաղներին և թե
խարեւայությունով բերածներին, այն մասին, վոր
գործադուլավորների կողմից բոյկոտի յեւ յենթարկված
ձիաթուրա-Փոթիի բոլոր արդյունաբերությունները...
Քանի զիս խազեցինները չեն բավարարել մեր պա-
հանջները վոչ մի հանքում, վոչ մի գործարանում, վոչ
մի նավի վրա չեւ շարժվի և վոչ մի բանվորի ձեռք:

Կեցցե մեր գործադուլը:

Կեցցե բանվորության համերաշխությունը:

Կորչեն զավաճանները:

Գործադուլային բյուրո.

Պրոլետարներ բոլոր լեռկրների, միացեք!

ԿՈՎԿԱՍՅԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՌՈՒՍ. ՍՈՅ. ԴԵՍ. ԲԱՆՎՈ- ՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ.

Մենք, գերձակներս, Սափարովի և ուրիշ ծխախո-
տի գործարանների բանվորներս, ձիաքարշի (կոնկայի)
ծառայողներս ու լրացիրների գրաշարներս ամբողջու-
թին միանում ենք Թիֆլիսի բանվորների ընդհանուր
պահանջին և մեր կողմից ավելացնում ենք հետեւյալ
մասնավոր պահանջները:

I. Դերձակները. 1. Աշխատանքն սկսել առավո-
տյան ժամը 8-ից: 2. Արհեստանոցը մաքրել այն ժա-
մանակը, յերբ բանվորներն այնտեղ չեն: 3. Հարթուկ-
ների տաքացնելու տեղը առանձնացնել: 4. Ռոճիկները
բաժանել ամսական 2 անգամ 1-ին և 15-ին: 5. Վե-
րացնել հայտարարությունը. «Խստիվ արգելում և
մուտքը կողմանկիների համար»: 6. Նշանակել ռոճիկ-
ների մինիմում կանանց համար 40 ոռւր, ամսական,
մարդկանց համար մեծ կատրներ կարողներին 50 ո.,
փոքր կառուներինը 40 ո.: 7. Ռւշանալու համար տու-
գանքը վերացնել, կիրակի. — տոն որերի վարձը դուրս
չը գալ ռոճիկներից: 8. Արհեստավորների վարչությունը
վոչ մի գործ չունենա մեզ հետ: 9. Աշակերտների հա-
մար սահմանել 6 ժամյա աշխատանքի որ, իսկ կիրա-
կիսոն որեւին չաշխատեցնել:

II. Ծխախոտի գործարանի բանվորները (Սափա-
րով և ուրիշները): 1. Ավելացնել գները. 1,000 պա-
պերոսին 60 կոտ: 2. Բանվարներին ընդունելու ու ար-
ակելու պետք և լինի բանվորների ձեռքին: 3. Մար-
ձակելու վետք և լինի բանվորների ձեռքին: 4. Մաշ-
կավայել վերաբերմունք: 5. Ճաշելու տեղին հատկաց-
նել մաքուր սենյակ: 6. Յեռացրած ջուր թեյի համար:

III. Զիտքաբանի ծառայողներ. 1. Ավելացնել սո-
ճիկները: 2. Մարդավայիլ վերաբերմունք: 3. Ռոճիկ-
ների լրիվ պահպանում հիմանդրության ժամանակ: 4.
Առողջապահական պայմանների լավացում:

IV. Լրագիրներ շարողներ: 1. Շաբաթական մի
որ աղատ: 2. Հերթազոտն բանվորը, վորը առավոտյան
6—7 ժամ մնում և տպարանում, մյուս ամբողջ որը
աղատ պետք և լինի աշխատանքից: 3. Ավելացնել մի
մարդ:

Թիֆլիսի կոմիտեակի պարագան:

Թիֆլիսի կոմիտեակի պարագան:

Բոյոր յերկրների արմեսավորներ, միացիք!

ԹԻՖԼԻՍԻ ԺԸՆԱՑՈՂՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿՑՈՒԱՆ ՄԻԱԽԹՅԱՆ.

Հնկերներ. Հիշում եք արդյոք հոկտեմբերյան փայլուն որերը. այն փայլուն որերը, յերբ ազատագրական շարժումը Ռուսաստանին գեղի ազատություն երտանում. Հիշում եք, թե ինչքան խոշոր գեր եր կատարում բանվոր գասակարգն այս հեղափոխության մեջ: Նա հանդիսանում եր հեղափոխության առաջավոր բանակը: Նա յեր վոր ձեռք բերեց հոկտեմբերի 17-ի մանիքեստը (արյունով վողովեց Ռուսաստանի քաղաքների փողոցները): Նա Ռուսաստանին ավելցած ազատության փայլուն որեր: Անշուշտ այն ևս հիշում եք, թե յեղայրության ինչպիսի յերդումներ եյին առում խաղեյինները բանվորներին: Սրանք եյին բանվորության տոնախմբության որերը:

Հիշում եք պանդոկների բանվորների զործագութ 1906 թ. վորը պասկեց մեր փայլուն հաղթանակով: Այս հաղթության պատճառները պետք ե վորոնինք 1905 թ. հեղափոխական յելությների մեջ: 1906 թ. խաղեյինները գեռ շարունակում եյին զգալ հեղափոխության յերկուով և նրա մոտիկանալը խոնարհեցրեց նրանց բանվորների առաջ:

1906 թ. հետո հեղափոխության հորձանքները սկսում են աստիճանաբար իջնել և այսպիսով խաղեյինների համար հիմք և պատրաստվում բանվորներին

հաղթելու: Ուկակցիայի ուժեղանալն ուշքի յև բերում մեր խաղեյիններին, Նրանք կոխվ են սկսում բանվորության դեմ, բայց կովում են վոչ թե ամեն մեկն առանձին, ինչպես առաջ եր, այլ կովում եյին միացած, կազմակերպված ույժերով: Նրանք շատ լավ եյին գիտակցում, վոր անհատորեն մղած կովով չեյին կարող հաղթել բանվորներին, դրա համար սկսեցին միանալ կազմակերպել իրենց բյուրոները և այդ ձևով արշավիլ մեր դեմ: Ով չի հիշում պանդոկների բանվորության անցյալ տարվա անվանի գործադուլը: Ով չի հիշում այն, թե ինչպես խաղեյինները կազմակերպված կերպով դիմավորեցին մեղ պատերազմի գաշտում: Մեր թշնամիների բանակը կազմակերպված և միություններում, և զարգես մի ամբողջություն, այնպես և գուրս դարձ մեր գեմ: Ընկերներ, այս քանի որերը միություններում աեղի ունեցավ զերակազմություն, վորից տեղեկացանք, վոր զգալիորեն պակասել և միությունների անդամների թիվը: Բջջները վոչնչացել են, Միություններից անդամներին առանձ մեծ մասամբ լինում և պանդոկների ծառայողների կողմից: Յիթե ուզում ենք, վոր խաղեյինները չը հաղթեն մեղ, յեթե ուզում ենք պահպանել մեր ունեցած հաղթանակները և նոր իրավունքներ ել ձեռք բերել, յեթե ուզում ենք հետ կանգնեցնել նրանց միացած ույժը և ապահովեցնենք հաղթությունը, առանձնապես կոչ ենք անում պահպաների բանվորներին բոլորին, մտնել միություն և ուժեղացնել պետք և գիտենանք, վոր կազմակերպված կոփը լավագույն միջոց և խաղեյինների դեմ: Չը կափրկություն առանց այդ կազմակերպության: Վորակեամբ մի մարդ կազմակերպված ույժով գուրս գանք մեր թշնամու դեմ:

Յեթե ուզում ենք վոր խաղեյինները չը հաղթեն
մեզ և վօտնատակ ջանեն մեր իշավունքները, պետք
է դեմ լինենք արտելին. Այդ արտելը մի տեսակ թա-
կարդ է խաղեյինների կողմից, վարը հարստանալու
ուստ հույսեր և տալի բանվորներին ու այդպիսով բը-
թացնում նրանց գասակարգային գիտակցությունը:
Արտելը բանվորներին հեռացնում է իրենց գասակար-
գից ու զարթեցնում նրանց մեջ խաղեյնանարու զդաց-
նունք, կազմակուծում մտցնող միջոց և արտելը բան-
վորական բանակում, զբա համար կոչ ենք անում ձեզ,
ընկերներ, գեմ զնալ վնչ պրոլետարական կազմակեր-
պության և սաստիկ կոխվ հայտարարել նրան:

Յեթե ուզում ենք չը հաղթվել խաղեյիններից չը
պետք և զառնանք ձեսկան, ընկերներ, Ձեսկան ընկե-
րությունը մի կողմից ինքնախարեռություն . և ավե-
լորդ աշխատանքից առողջությանը մնաս բերելու տե-
սակետից, մյուս կողմից ել ձեռք բերված իրավունք-
ների ժխտում մնացող բանվորների կողմից: Սրա հա-
մար կոչ ենք անում, ընկերներ, չը մտնել ձեսկան ըն-
կերության մեջ և վոչ ել թույլ տալ մտնել վորեն բան-
վորի: Իսկ յեթե չեն լսի և վոտնատակ տալով այս-
քան ժամանակա կովով ձեռք բերած իրավունքները
կը մտնեն, կոչ ենք անում բոլոր գիտակից և բանվո-
րական շահերը պաշտպանելու տեսչ ունեցող բանվոր-
ներին հայտարարեն սաստիկ բոյկոտ այդպիսի դավա-
ճան բանվորներին:

Վերջում, յեթե ուզում ենք չը հաղթվել խաղե-
յիններից, պետք և ձեռք վերցնենք ըմբշամարտային
խաղերից և վարդենք այնպես ինչպես գիտակից բան-
վորին վայել և: Հաճախենք գասախոսություններին,
ներկա լինենք ժողովներին և այսպիսով բարձրանանք

մտավորապես, վորպեսպի խաղեյինները չոգտվեն մեր
մտավոր հետամնացությունից:

Կոչ ենք անում ձեզ, պանդոկային բանվորներիդ,
բոլոր մասնակում ել հիմնեք անդորքների կազմակեր-
պություններ, ինչպես այդ արել են հյուրանոց-բեռ-
տորանների ծառայողները, կազմակերպել անդորքների
կոմիտաններ ու զեկավար հանդիսանալ աղաս տեղերին:

Այսպիս ուրեմն ընկերներ, աշխատեք իրավունքել
վերև հիշված բոլոր միջոցները և այն ժամանակ ապա-
հովված կը լինի մեր հաղթությունը:

Կորչեն ձեսկան ընկերությունները:
Կորչի խաղեյինների քյալագուղությունը:
Կեցցե մեր գիտակից և միացեալ պայքարը:
1908 թ. մարտ ամիս, միության խորհուրդ:
(Տպվեց 1000 որինակ) միության տպարան:

ՏՐՈՄՎԱԾԻ ԲՈԼՈՐ ԺԵՄԵՑՈՂՆԵՐԻՆ

ԸՆԿԵՐՆԵՐ!

Գործադուլ հայտարարենք մայիսի մեկին:
Այսոր մայիսի մեկն և—աշխատանքի տոնը:
Շատ առնել ունենք մենք, բայց բանվորական
տոնը մայիսի մեկն և:

Այդ որը բանվորների ոիրած որն և, վորովհետէ
նա իր շուրջն և հավաքում բոլոր բանվորներին առանց
ազգի, սեփ և գովանանքի խորության:

Բանվորներն այդ որը հրաժարվում են աշխա-
տելոց հայտարարելով մի որյա գործադուլ:

Այսպիս և լինում թե Արտասահմանում, թե Ռու-
սաստանում և թե Կովկասում:

Հերթը մերնե ընկերներ: Անցյալ տարվա գործադուրի մեջ աջպակեց լավացնել մեր զբությունը:

Մեր թշնամիները խոնարհվեան բանվորության գործի համար մեր համերաշխորհն մղած կովի առաջ: Մոտ ալագայում տրամվայը անցնելու յե քաղաքային ինքնավարության ձեռքը: Մեր կուռ միաւթյունից և կախված քաղաքի հետ մեր վարսած բանակցությունների աջողությունը՝ միմիայն կովով կարող ենք ապահովել անցյալ տարվա գործադուրի միջոցով ձեռք բերած իրավունքները:

Գործադուր անենք մայիսի մեկին:

Քաղաքի հայրենն այն ժամանակ միայն կը տեսնեն, վոր մեծ և մեր ույժը և վոր ամեն ըստե պատրաստենք բարձրացնել մեր ձայնը մեր իրավունքների պաշտպանության և կոփ սկսել բանվորության գործի համար: Այն ժամանակ քաղաքային ինքնավարությունը ստիպված կը լինի ամեն քայլափոխում զիշումներ անել մեղ:

Ընկերներ, մենք չենք կարող լոել, յեր գործադուր և անում ամբողջ մուսաստանը Մոսկայի և Պետերբուրգի բանվորության զիմավորությամբ: Մենք չենք մնայ զավաճանի դերում համառուսաստանյան բանվորության գործի հանդեպ:

Գործադուր անենք, ընկերներ, վորով մի կողմից կուրախացնենք ուսւ բանվորությանը, իսկ մյուս կողմից կը ստրափեցնենք կապիտալիստ հալածողներին: Կեցցե մայիսի մեկի մի որյա գործադուր: Կեցցե բանվորական ընդհանուր տոնը:

Թիֆլիսի տրամվայի մի խումբ բանվորներ:

ԳՈՐԻՒ ԳՈՐԾԱԿԱՏԱՐՆԵՐԻ ԱՐՅԵՍԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

ԲՈՅԱՅ ՅԵՂԻ. ԽԵՌԱՋՈՎՆԵՐԻՆ

Զեղ ենք գիմում Գորիի քաղաքացիներ, վոր հաստատուն կերպով պաշտպանեք միության վորոշումները և այսպիսով իրակացնեք գործակատարների պահանջները, և կովելու միակ զենք հանդիսացող բոյկոտը: Ինչով և բացատրվում և ինչու յե բոյկոտ հայտարարվում ալ: Խառարակությունը բոլորս ել զիտենք թե ինչպիսի հարաբերություն և ստեղծված գործակատարների և խաղեցինների միջև: Այս յերկու դասակարգը միանգամայն բաժանված և մեկը մյուսից մեկի շահը զիմե մյուսինին ու մեծ սահմանով են բաժանված իրարից, մեկն ուզում և լավացնել իր կյանքի պայմանները, ձեռք բերել մարդկային իրավունքներ ու ասել, վոր ինքնել մարդի, ահա մի դասակարգի ձգտումը վորը պատկանում և հալածվողների բանակին: Իսկ ինչ և ներկայացնում իրենից մյուս բանակը: Թալանչիների, գոփողների և արյուն խմողների դասակարգն և այդ մյուսը նրանք ուզում են հանդցնել ժողովրդի, գլխավորապես բանվորների մեջ այն մաքուր հասկացողությունը, վորը նրանք այսոր ձեռք են բերել արյուն հոսությունով նրանք ուզում են համիտենապես ստրկացնել բանվորներին, նրանք չեն ուզում ժողովրդի բանվորների առաջադիմությունը և ամեն քայլափոխի վակում են նրանց ճանապարհը—ահա Պետ ովքեր են զրանք, ահա թե ինչ են ներկայացնում իրենցից նրանք բանվորների համար:

Բոլորին համար ել պարզ ու հասկանալի յե սա և հենց պրա համար ել միացել զինված բանակ և

Պրոլետարներ բոլոր լեռկրների, միացե՛!

կազմել հալածվածների գասակարգը աշկարա կոխվ
հայտարարել բռնժուազիային: Ինքն իրանից բացի
որի տեր չունի նա—բանվորություննը, վորը
ունի և իր ինտերնացիոնալ միություննը: Այս բոլորը
ինքնան բերեց կյանքի այս որդա պայմանները:

Բանվոր գասակարգի հակասակորդ բանակից
գլուխ բարձրացրեց այդ բանակի ներկայացուցիչներից մեկը՝ պ. Խառատովը, նա վողոց շպրտեց իր գործակատարին, վորին չի ուզում բավարարել և ուզում
և վոր հնաց վակոցնեմ ել հոգին տա այդ գործակատարը: Հենց սրա համար ել յեզր. Խառատովինը յենթարկվում են սաստիկ բոյկոտի արձակված աշխատավորին չը բավարարելու համար, բոյկոտը նրա վրայից չի փերցվի, քանի զեռ բավարարված չի լինի արձակված բանվորը՝ ով կը խումափ բոյկոտը և զեմ կը զնա ընդհանուր վորոշման, կը յենթարկվի պատասխանավության:

Գորիի գործակատարների արհեստակցական միության վորոշում:

Կորչի սեաքցիան:

Կեցցե գասակարգային կռիվը:

Գործակատարների բյուրո:

Գորիի գործակատարների բյուրոյի տպարան:
(Սեպտեմբ. 1908 թ.)

ՌՈՒՍԱՏԱՆԻ ՍՈՅ. ԴԵՄՈԿ. ԲԱՆՎ. ԿՈՒՍԱՅՑՈՒ- ԹՅԱՆ ԿՈՎԿԱՍԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ.

Դինու սկանդալների, ուսառարանների, միկետան-
ների, օրենսկոյի պողոքերների», զայեզդի տների» ծա-
ծառայողների պահանջները:

1. Կիրակի և 12 գլխավոր տան որերին վակի բոլոր վաճառատները և աղատ թղղնել ծառայողներին:

2. Ապրիլի 1-ից մինչև հոկտ. մեկը վաճառա-
տները բաց անել առավոտյան 6 ժամին և վակել զի-
շերվա 10 ժամին, իսկ հոկտեմբերի 1-ից մինչև ապ-
րիլի 1-ը 7 ժամից մինչև յերեկոյան 9 ժամը:

3. Բնակարանները հեռացված պետք և լինեն
վաճառատեղերից:

4. Աշակերտ ընդունել մի տարով, արգելել 14
տարեկանից փոքր աշակերտ ընդունելը:

5. Քաղաքավարի վելաքերմունք:

6. Գործադուլի պատճառով վոչ վոք չը պետք և
պատժվի, վոչ արձակելով, վոչ ել սոճիկի պակասացու-
մով:

7. Ծառայողին արձակել կարելի յե միայն այն
զեպքում, յեթե խաղեյինը նախազգուշացրել և մի ամիս
ուսուց ու ընկերներն ել տվել են իրենց համաձայնու-
թյունը արձակելու վերաբերյալ

8. Շաբաթական մի անգամ ընկերների պահանջով գործից ազատել յերեկոյան 6 ժամից:

Ընկերներ, այս բոլոր պահանջների համար մենք մի անգամ գործադուլ արինք և կատարեցին եւ բայց այս բավարարելը դուքս եկավ «խաղելինների» կողմեց մի անամոթ սուտ միայն մեզ խարեցին ու մի շաբաթից հետո դրին նույն անտանելի պայմանների մեջ, ինչ վոր առաջ եր: Այսպիսի պայմաններում ապրել անկարելի յեւ և մենք անպայմանողին պետք ե ձեռք բերենք այն, ինչ վոր պահանջում ենք:

Զգուշացնում ենք «խաղելիններին» յեթե այս 5 որվա ընթացքում չի բավարարվի մեր բոլոր պահանջները, այն ժամանակ՝ մենք կը դիմենք գործադուլի և ուրիշ միջոցների:

Արագատիպ տնպարան Լա, Կոսի 1905 թ. № 114:



ՀՀ Ազգային գրադարան



NL0196744

ԳԻՆԵ 50 ԿՈՊ.

Apr.

2-5992

H
862